№ 221 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11 — 1906 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11 № 221

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այրի Նատալիա Յակոբեան Գրիգորեանը իր զաւակներով և Նունէ Յարութիւնեան Յովհաննիսեանը խորին վշտով յայտնում են՝ առաջինը իր սիրելի և անմոռանալի ամուսնու, զաւակները իրանց անգին հօր, վերջինը իր քրոջ որդու՝

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

մահը։ Հոգեհանգիստը կը լինի չորեքշաբթի, հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը հինգշաբթի, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տնից (Միքայէլեան փող. № 37) դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը կը լինի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու գաւթում։ (և.չ.հ.) 2—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը։

Տարեկան գինն է Թիֆլիսում	4 ր.	Ուրիշ տեղեր՝	5 ր.։
Կէս տարվայ » »	2 ր.	» »	2 ր. 50 կ.։
3 ամսվայ » » »	1 ր.	» »	1 ր. 25 կ.։
1 ամսվայ » » »	— 40 կ.	» »	— 50 կ.։

Մենք ընդունում ենք և զանազան յայտարարութիւններ ամեն լեզուներով։
Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում։
Շաբաթ, հոկտեմբերի 14-ին, լոյս կը տեսնի № 18.

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան
աա. 1—1

Նօնի (Յոֆեան) Բաղդասարեան Զարդաղեանցը, սրա որդիքը՝ Զաքարիա քահանան և Բարսեղը, հարսները՝ տիրուհի Աննան, Աննան և դուստրերը՝ Սողոմէ Բաջաղեանը և Նատալիա Աւետիսեանը վշտաբեկ սրտով յայտնում են ազգականներին և բարեկամներին, առաջինն իր 62 տարվայ հաւատարիմ ամուսնու և միացեալներն իրանց սիրելի և բազմերախտ մօր և սկեսրոջ՝

ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԶԱՐԴԱՂԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 9-ին, 82 տարեկան հասակում։ Ամբիծքը՝ հոկտեմբերի 11-ին, երեկոյեան $5^1/_2$ ժամին, իսկ յուղարկաւորութիւնը հետևեալ օրը, հինգշաբթի, առաւօտեան $10^1/_2$ ժամին, Զգրաշէնի ուսումնարանի վերին յարկից դէպի յիշեալ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Բ Ժ Ի Շ Կ

Մ. ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ներքին ու երեխայոց հիւանդութիւնների
Ընդունում է առաւ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.,
Ելիզավետինսկայա փողոց տուն № 21.
աա. (ա. օ.) 9—10

Ա. ՄԵԼԻՔ-ՍԱՂԱՀՎԵՐԴԵԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻՔԱԿԱՆ
առարկաների դասեր։
աա. Межевая, 2. 17—20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աշխատանքի աղբիւրներ. Պատմութիւնն էլ էք ուզում կեղծել. Վերջին տեղեկութիւններ. Շարժումներ և հետևանքներ. Կառավարչական փաստեր և լուրեր. Բարձրագոյն դպրոցներում. Իմ բողոքը «Մշակի» խմբագրութեան. Տեղեկութիւններ գաւառից. Արտասահման թղթակիցների կարծիքը Ստոլիպինի մասին. Պօստատար գնացքի թալանում. Մոսկվայի համալսարանի պատգամաւութիւնը. Հոկտեմբերի 17-ի դաշնակցութիւնը. Կեղծ նամակներ Ղզլարում. Անդրէևի Սավվան և անարխիզմը. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

I

Անդրկովկասի զանազան տեղերից մենք ստանում ենք նամակներ, որոնց հեղինակները դիմում են մեզ հարցերով տեղական արհեստներ զարգացնելու մասին։

Գաւառացին սկսել է զգալ արհեստների ուսումնասիրութեան կարևորութիւնը։ Նա կարօտ է ցուցումների և ղեկավարութեան իր բարի ցանկութիւնները իրագործելու համար։

Արհեստի ուսումնասիրութիւնը մանաւանդ կարևորութիւն ստացաւ վերջին տարիներում, երբ գիւղացիների համար պարզվեց, որ նրանց գիւղից փախչելը դէպի քաղաքներ աննպաստ է գիւղի աղքատութեան և ինքնապաշտպանութեան համար։

Իսկ եթէ չէր կարելի գիւղից հեռանալ, անհրաժեշտ էր աշխատանքի նոր աղբիւրներ ստեղծել գիւղի մէջ։

II

Գիւղական ընտանիքի եկամուտի մեծացնելը—առաջիկայ խոշոր մեր պարտաւորութիւններից մէկն է։

Այն ժամանակ, երբ գիւղը սնանկացել է, կարօտ է կողմնակի օգնութեան և մասնաւոր աշխատանքների, այն ժամանակ, երբ գիւղը բաւականաչափ աշխատանք չը գտնելով իր շրջանում պահանջ է զգում իր զաւակների մի մասը օտար տեղեր ուղարկելու փող ձեռք բերելու համար, հէնց այդ միևնոյն ժամանակ գիւղի համար շատ անհրաժեշտ է իր զաւակների ներկայութիւնը գիւղում, որպէս զի գիւղը ազատ լինի յարձակումներից և կարող լինի դիմադրել ամեն տեսակ յարձակումների։

III

Առաջին անգամից այնպէս է թւում ընթերցող հասարակութեան, թէ ինչ ժամանակն է խօսել արհեստների տարածման և զարգացման մասին ներկայումս. բայց գիւղական շրջաններից մենք լսում ենք ձայներ, որոնք պահանջում են օգնութիւն թէ փողով, թէ ցորենով, թէ տեղական աշխատանքի նոր աղբիւրներով։

Եւ եթէ մենք կարող լինէինք տեղական աշխատանքներ կազմակերպել աղէտի ենթարկված տեղերում, մենք կարող կը լինէինք էական օգուտ հասցնել ազգաբնակութեան և տալ գիւղական ընտանիքի ձեռքը ապրուստի միջոցներ։

IV

Մի այնպիսի գործ, ինչպէս է Շուշի-Գանձակ ճանապարհի շինութիւնը, արդէն մի որոշ աշխատանքի միջոց է հայթայթել այն շրջանի գիւղացիներին, որով պիտի անցնի ճանապարհը։ Եթէ մի քանի այդպիսի ճանապարհներ ևս ծրագրված լինէին, կարելի էր թէ մի շատ օգտաւէտ գործ կատարել և թէ ժողովրդի ապրուստի միջոցները աւելացնել։

Դժբաղդաբար ճանապարհների շինութեան համար գանձարանը քիչ հոգ է տանում ներկայումս, իսկ տեղական ժողովուրդը չէ կազմակերպված այդպիսի գործունէութիւնների համար։

V

Մեր ընթերցողները գիտեն, որ ներկայ տարվայ առաջին ամիսներից մեր երկրում ջուլհակութեան արհեստի զարգացման մի քանի փորձեր են արվում։ Թիֆլիսում, Գանձակում, Շուշում բացվել են արհեստանոցներ, որտեղ սկզբնական գիտելիքներ են աւանդվում գործնական ջուլհակութեան համար։

Փորձերը բաւարար արդիւնք են տուել և յոյս կայ, որ այդ արհեստը զարգանայ մեր երկրի մի քանի շրջաններում։

Գործը դեռ նոր է, դեռ իր սկզբնական քայլերն է անում, բայց և այնպէս կարողացել է գրաւել շատերի ուշադրութիւնը։

VI

Թէ ջուլհակութեան և թէ ուրիշ արհեստների վերաբերութեամբ պէտք է միշտ մի առանձին խնամքով ու զգուշութեամբ վերաբերվել սկզբնական գործունէութիւններին, որպէս զի նոր արհեստը չը յուսախաբի մարդկանց և յետոյ հիասթափութիւն չը պատճառի առհասարակ նոր արհեստների ներմուծման գործին։

Այդ պատճառով շատ կարևոր է, որ հիմքը դրվի հաստատ, կշռելով տնտեսական և ուրիշ հանգամանքները, որպէս զի արհեստն այնուհետև կարելի լինի ազատօրէն տարածել ազգաբնակութեան մէջ հաստատ յանձնարարականներով։

Ա. Քալանթար

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԷԼ ԷՔ ՈՒԶՈՒՄ ԿԵՂԾԵԼ

«Երկիր» թերթը իր առաջին համարից արշաւանք է սկսել «Մշակի» դէմ։

Արշաւանք պատերազմական բոլոր պարագաներով։

Եւ որովհետև «Երկիրը» չէ կարողանում այսօրվայ «Մշակի» հետ աջողութեամբ կռւել, միայն խայտառակվում է և բարոյական անդունդների մէջ գլորվում,—այժմ փորձ է փորձում «Մշակի» անցեալին դիմել այն յոյսով, թէ գոնէ այդպիսով փոքր ինչ կը դրստէ իր բաները։

Սակայն այնտեղ էլ նիւթ չէ գտնում։

Ի՞նչ անել։

Ինչպէ՞ս թէ ինչ անել։ Միթէ դժուար է։ Նա սկսում է կեղծել, ստել, հնարել այն միամիտ ենթադրութեամբ, թէ իր ասածները մարդիկ կընդունեն հալած իւղի տեղ և կը հաւատան։

Մի հաշիւ էլ կայ այդտեղ։ Ինչո՞ւ կօնտրաբանդով չանցկացնել մի քանի առասպելներ թէ ներկայ ընթերցողների վրա տպաւորութիւն գործելու և թէ ապագայ ժամանակագիրներին մոլորեցնելու համար։

Անշուշտ ժամանակը դեռ չէ հասել 1903 թւի եղելութիւնները իրանց բոլոր մանրամասնութիւններով երևան հանելու։ Կան հանգամանքներ, որոնց մասին դեռ չէ կարելի խօսել. կան փաստեր, որոնց երևան հանելը կարող են անպատեհութիւններ առաջ բերել։ Մենք դեռ չենք կարող պատմել «Մշակի» խմբի կատարած գործերը։ Եւ մանաւանդ այդ չէինք կարող անել այն ժամանակ։ Մենք գործեցինք, որքան կարողացանք, բայց հրապարակի համար մենք ոչինչ չէինք կարող հանդէս գնել։ «Մշակի» թշնամիները օգտվում էին դէպքից իրանց հաշիւները առաջ մղելու։ Եւ այն ժամանակ, երբ մենք իրապէս գործում էինք, մեր շուրջը լսվում էին ինտրիգանների բամբասանքները մեր մասին։ Մենք շարունակում էինք գործել, յոյս ունենալով որ կը գայ ժամանակ, երբ կարող կը լինենք պատմել եղելութիւնները։

Բամբասանքը նոյն յամառութեամբ և անազնւութեամբ չը խնայեց մեր ժամանակակից խոշոր դէմքերից մէկին, Արիստակէս Սեդրակեանին։ Այդ բամբասանքը հրատարակվեց, տարածվեց և շատ մտքեր պղտորեց ու մոլորեցրեց։ Ձեր խումբը մեղսակից է այդ ստոր բամբասանքին։ Իսկ դուք ի՞նչ արիք բամբասանքը վերացնելու համար։ Ոչինչ։ Դուք չը հերքեցիք թէ Սեդրակեանի և թէ մի քանի ուրիշների վրա ձեր հրատարակած զրպարտութիւնը։ Իսկ այսօր դուք հրապարակ էք եկել հին անազնւութիւնների վրա նորերը աւելացնելու և մեզ բամբասելով՝ ձեր հրատարակութիւնների մէջ նոր արատներ և սև բծեր գետեղելու։

Բամբասված մարդիկ ձեզնից բարոյական բաւարարութիւն են սպասում։ Սեդրակեանի մաքուր անունը ինքն իրան, ճիշտ է, պաշտպանել է և կը պաշտպանի, բայց դուք ի՞նչ պատասխան պէտք է տաք հասարակական խղճմտանքի առաջ։

Հասարակական խղճմտանք—ձեզ համար դրանք ծաղրելի խօսքեր են։ Ծաղրելի են, որովհետև դուք ամեն անպատկառութեամբ այսօր գրիչ էք վերցնում նոր եղեռնագործութիւն անելու այդ խղճմտանքի դէմ։

Բայց բամբասանքները միշտ էլ կը մնան բամբասանքներ և կը լինեն յաւիտենական դատապարտութիւն այն բոլոր մարդկանց համար, որոնք կամ սեփական զրգռումներով կամ վատառողջ թելադրութիւններով ցանկացան ժողովրդական մեծ աղէտի ժամանակ իրանց անմաքուր հաշիւները առաջ մղել, օգտվելով այն հանգամանքից, որ մարդիկ չեն կարող շատ բան պարզաբանել, շատ գաղտնիքներ յայտնել։

Լսենք ինչ է ասում «Երկիրը».

1903 թւականն էր։ Գոլիցինեան ռեժիմը Կովկասում իր սանձարձակ բռնակալութեամբ ընդհանուր սարսափ էր տարածել։

Եւ այդ դաժան օրերին ամենից շատ հալածւածը, քաւութեան առաջին նոխազը հայն էր, տանջւած ու աշխատանքի բեռի տակ կորացած հայ ժողովուրդը։

Հալածւում էր այն ամենը, ինչ որ հայկական էր, ինչ որ հայ անունն էր կրում։

Եւ ահա այդ խեղդող պայմաններում վրայ հասաւ կառավարութեան մի նոր կարգադրութիւնը, համբերութեան բաժակն ամբողջովին լցնելու համար։

«Լոյս տեսաւ բարձրագոյն ուկազ՝ հայլուսաւորչական եկեղեցու կալւածները գրաւելու մասին»—ահա այդ հրամանը…

Պարզ է, որ իւրաքանչիւր ազնիւ հրապարակախօս, իւրաքանչիւր բարեխիղճ գործիչ իր պարտքը պէտք է համարէր իսկական իրողութիւնը պարզել, կառավարական դաւերը ժողովրդին հասկացնել։

Սակայն «Մշակի» խմբագիրները ոչ միայն այդպիսի քաջութիւն չունեցան, այլ գոնէ լռութեամբ չը բաւականացան։

Ահա ինչ էք դուք այսօր ասում։

Անխիղճներ, անպատկառներ։

Դուք այդքան անամօթ կերպով դիպչում էք մեր սրտերի ամենանուրբ թելերին։ Միթէ հրապարակախօսի համար կարող էին լինել աւելի ծանր վայրկեաններ, քան մենք ենք զգացել և տարել այն ժամանակ։ Մենք այրվում, տապակվում էինք այն սարսափելի վիճակից, որը կաշկանդել էր մեր լեզուները մեր գրիչները։ Իսկ դուք այսօր մեր հոգեկան տանջանքները անմաքուր ձեռքերով տրորում էք չար նպատակներով։

Դուք ի՞նչ գիտէք, թէ «Մշակի» խմբագրութեան անդամները չեն գրել, չեն ձգտել բողոք յայտնելու։ Նրանք այդ արել են. բայց նրանք չեն մեղաւորը, որ ոչինչ չէ լոյս տեսել «Մշակում»։

Ամօթ է, պարոններ։

Դուք ինքներդ ասում էք, թէ Գոլիցինեան օրերում հալածված էր այն ամենը, ինչ որ հայկական էր. դուք լաւ գիտէք, որ նոյն իսկ ցենզուրական կոմիտէտը ահաբեկված էր կովկասեան բռնակալից ու ջնջում էր անխնայ ամեն բան, և այժմ այդպիսի հարցեր էք դընում։

Ո՞ւր էիք դուք։ Ինչո՞ւ ձեր ըմբռնած հրապարակախօսական պարտքը չէիք կատարում, մանաւանդ որ այն ժամանակ դուք «Մշակի» էջերում փոքր տեղեր չէի՛ք գրաւել։ Ե. Թոփչեանը ամեն օր յօդուածներ էր տալիս Մակեդոնիայի մասին, երբեմն բացատրում էր սիոնիզմի էութիւնը, խօսում էր «օգտակար կազմակերպութիւնների» մասին, գետեղում էր «մատենագրութիւններ» և այլն։ Աճառեանը վէճի էր բռնված Սարուխանի հետ Հռոմի պապի մասին և յետոյ գրում էր իր «Զորերնուկը», «Լաց պապաւ, լաց» պատկերները։ Իսկ «Մշակի» խումբը երբէք այնքան սերտ չէր եղել, ինչպէս այդ ծանր օրերում։ Խմբագրութեան անդամները իրանց աշխատակիցներով և բարեկամներով գործում էին դամոկլեան սրերի տակ։ Մեր մօտիկ և հեռաւոր աշխատակիցները ամեն սրտակցութեամբ մեզ հետ էին՝ բժ. Ածբունի, Խանասամեան, Տէր-Աւետիքեան, Սիմոնեան, Օհանջանեան, Սուլխաթեան, Զալխուշեան և շատ ուրիշներ։

Եւ մեզնից իւրաքանչիւրը գործում էր, որքան կարող էր։ Եթէ այդ չը գիտէք, մեղաւորը դուք էք։

«Երկիրը» ասում է.

Այն ժամանակ, երբ հայաբնակ կենտրոններում հայ ժողովուրդը ոտքի կանգնած բողոքի ու ցասման ցոյցեր էր անում, «Մշակի» խմբագիրները լռիկ-մնջիկ ծածկել էին իրենց օթեանները, իսկ նրանց պետը՝ անզուգական Քալանթարը կանաչազարդ Փամբակի հով ու զով լանջերում հանգստանում էր ու դասախօսութիւններ կարդում մածնի և սերզատ մեքենայի մասին։

Միթէ դուք ինքներդ չէք ամաչում ձեր խօսքերից։

«Քալանթարը հանգստանում էր»—համարձակվում էք ասել դուք։

Ոչ, պարոններ, դուք շատ լաւ գիտէք, որ վաղուց է, չափազանց վաղուց, ինչ Քալանթարը չը գիտէ, թէ ինչ է հանգստութիւնը և նա նոյն իսկ կորցրել է հանգստութիւն բառի հասկացողութիւնը իր համար։

Այո, նա Փամբակում ժողովրդին նոր արհեստ էր սովորեցնում և դասախօսութիւններ էր կարդում։ Այո, նա գործում էր այն աշխատաւոր մասսայի համար, որի անունը դուք շահագործում էք ամեն օր։ Եւ միայն Փամբակում չէ նա տարիներ շարունակ դասախօսութիւններ կարդացել, այլ և շատ ուրիշ տեղերում։ Մի ծաղրէք այդ գործը։ Ձեր ծաղրը ձեզ վրա կանդրադառնայ։

Այն ժամանակ, երբ կարդացվում էին Փամբակում դասախօսութիւններ, դեռ ոչ մի ցոյց չը կար։ Դուք սուտ էք խօսում։ Բայց կայ և մի ճիշտ բան, որ ձեր աչքերը պէտք է ծակէ։ Այդ այն է, որ առաջին դիմումը Կաթողիկոսին և առաջին ցոյցը եղաւ հէնց այն Փամբակում, ուր Քալանթարը կարդում էր իր դասախօսութիւնները։ Յետոյ նոյնը եղաւ մեծ դիրքով Ալէքսանդրապոլում և ուրիշ տեղերում։

Դա նշանակալից է և առեղծուածային։ Հանելուկը լուծելու աշխատանքը թողնում եմ ձեզ։

Միւս հանելուկները յետոյ կիմանաք։

Բայց միայն մի բան կասեմ, որ ժողովրդական խաղաղ ցոյցերին համակրութեամբ եմ վերաբերվել մշտապէս։

Իսկ խմբագրութեան միւս անդամները։ Նրանցից մէկը կազմեց և խմբագրեց այն ընդարձակ զեկուցագիրը, որ յետոյ քննութեան ենթարկվեց Էջմիածնում և նիւթ դարձաւ դիմումի համար։ Խմբագրութեան միւս անդամը զեկուցագրով և ուրիշ կարևոր յանձնարարութիւններով գնաց Էջմիածին. երրորդ անդամը այցելում էր զանազան խորհրդակցութիւններ, ևայլն, ևայլն։

Մեր մօտ մարդիկ, մեր բարեկամները այդ բոլորը լաւ գիտէին, իսկ մեր թշնամիները չը գիտենալու էին իրանց դնում և իրանց դաւերը ու նեղ հաշիւները առաջ տանում։

«Երկիրը» ասում է.

Բազմաթիւ ստորագրութիւններով նամակներ էին ուղղում խմբագրութեանը, բողոք յայտնող պատգամաւորութիւններ էին մտնում խմբագրատուն։ Վերջապէս մի քանի տեղերից էլ բոյկոտի ենթարկեցին ժողովրդին դաւաճանած այդ թերթը։ Կապոցներով «Մշակը» յետ էին ուղարկում մտավախ ու սարկահոգի խմբագիրներին։ Եւ այդ բուռն բողոքն աւելի խոշոր անպատւաբեր դէպքերով կը պսակւէր, եթէ մի քանի դաշնակցականների միջամտութիւնը չը լինէր, միջամտութիւն, որ գալիս էր ըմբոստ [illegible] ներողամտութեանը [illegible].

Դարձեալ ամօթ ձեզ։ Այդ բոլորը սուտ է և այն էլ ստորագոյն սուտ։ Ոչ մի բազմաստորագիր նամակ, ոչ մի բողոքող պատգամաւորութիւն, թերթի ոչ մի համար վերադարձված մենք չենք տեսել։

Սուտ է, սուտ և սուտ։

Ճիշտ է, այդպիսի լուրեր տարածում էին «Մշակի» մի քանի թշնամիներ և թուլամիտ հայրենասէրներ. բայց նոյն իսկ «Մշակի» մէջ մենք իր ժամանակին այդ շինծու լուրը արձանագրեցինք և հերքեցինք։ Արդարև, ահա ինչ է տպված «Մշակի» 1903 թւականի № 242-ում։ Կարդացէք և կարմրեցէք, եթէ ստախօսները կարող են կարմրել։

Մենք զարմանում ենք թէ որ աստիճան մարդիկ կարող են կուրանալ իրանց թշնամութեան մէջ։ Անթիւ սուտ և չարամիտ լուրերից յետոյ, որոնք առատօրէն տարածվում էին զանազան ժամանակներ «Մշակի» մասին, այժմ էլ մեր թշնամիները գաւառներում մի առանձին հաճութեամբ տարածում են այն լուրը, որ իբր թէ «Մշակի» բաժանորդներից շատերը վերադարձրել են իրանց համարները և հրաժարվել են բաժանորդագրութիւնից։ Մենք լաւ գիտենք, որ մեր բարեկամները շատ քիչ գին կը տան այդտեսակ լուրերին. և եթէ նոյն իսկ տեղի ունենային այդպիսի դէպքեր, առանձին մի նշանակութիւն չէին ընծայի նրանց, որովհետև մենք ամենքն այդ գիտակցութեամբ չենք լրագիր հրատարակում, որ ամեն մարդ մեզ հաւանէ։ Մենք ղեկավարվելով որոշ ծրագրով առաջ ենք տանում մեր գործը, յանձն առնելով անախորժութիւններ և թշնամութիւններ։ Ուստի եթէ տարածված լուրերը նոյն իսկ ճիշտ լինէին, առանձին մի նշանակութիւն չէին ունենայ գործի էութեան տեսակէտից։ Բայց բանն այն է, որ այդ լուրերը բոլորովին շինծու են, սուտ և հրապարակ են բերված որոշ տպաւորութիւն գործելու նպատակով։ Մենք կտրական կերպով յայտարարում ենք, որ «Մշակի» նոյն իսկ ոչ մի բաժանորդ չէ վերադարձրել լրագիրը։ Այդպիսի դէպք տեղի չէ ունեցել։ Այժմ հարցնում ենք, որքան գին ունէր այդ սուտ լուր հնարելը։

Բայց դուրս է գալիս, որ սուտ լուր հնարելու ոգին դեռ կենդանի է և նա այսօր անպատկառ երևան է եկել մի անգամ ևս հանդէս գնելու անազնւութեան և անմաքրութեան թելադրութիւնները։

Ճիշտ է մի բան, որ մենք ստացել ենք իբր յեղափոխական խմբերից սպառնալիքներ, համակված ըէակցիոնական և պատրիոտական ափեղցփեղութիւններով՝ ուղղված Արծրունու և «Մշակի» ուղղութեան դէմ։ Այդ ամօթալի նամակներից մի քանիսը մինչև այժմ էլ մնում են մեզ մօտ։

«Երկիրը» յիշատակում է և այն երեխայական, եթէ չասենք խարդախ առարկութիւնը, որ «Մշակի» թշնամիները բերում էին, ցանկանալով վնասել «Մշակի» անունին։ Այդ այն է, որ «Մշակը» քաղուածօրէն տուել էր պաշտօնական «Кавказъ» լրագրի յօդուածը կալուածների մասին։ Ահա ինչ է ասում «Երկիրը».

Նրանք իրանց թերթին գոլիցինեան իշխանութեան երկրորդ պաշտօնական օրգանի դեր տալով, իսկոյն արտատպեցին յիշեալ «բացատրութիւնը» առանց կրճատումների, առանց որ և է ծանօթութեան։

Դարձեալ սուտ։ Յօդուածը տպված էր շատ մեծ կրճատումներով և փոքր ծանօթութիւնով։ Թարգմանութեան սկզբում յայտնված է, որ մենք բերում ենք յօդուածի միայն մի մասը (№ 163), իսկ յօդուածի վերջում ասված է, որ մեր «ցանկութիւնն» էր ծանօթացնել ընթերցողներին Կովկասի պաշտօնական լրագրի բացատրութիւնների և կարծիքների հետ։ Իսկ մի համար յետոյ տպված էր առաջնորդող, որից առաջ ենք բերում հետևեալը.

Գոնէ փաստեր և իրողութիւններ.—Լրագրական գործունէութեան մէջ մենք յաճախ ականատես ենք լինում հետևեալ հանգամանքին։ Լրագիրը հաղորդում է մի շարք տեղեկութիւններ միայն այն նպատակով, որպէս զի ընթերցողը գաղափար ունենայ նրանց մասին, իսկ միւսների վերաբերութեամբ նա յայտնում է իր կարծիքը, որոշ դիրք է բռնում։ Այդպէս մենք տեղեկութիւններ ենք տուել յաճախ քաղաքական դէպքերի, օրէնքների և պաշտօնական հաղորդագրութիւնների մասին առանց մի բառ մեզնից աւելացնելու։ Այդ դէպքում կարևոր է նկատվել այն կէտը, որ ընթերցողին հաղորդված լինեն կարևոր նիւթեր և տեղեկութիւններ…

Լրագրի կողմից կարծիք յայտնելը և դիրք բռնելը ամեն մի երևոյթի առթիւ անիրագործելի է զանազան պատճառներով։ Եւ եթէ լրագիրները զետեղէին տեղեկութիւններ միայն այն բաների մասին, որոնց առթիւ նրանք հնարաւորութիւն ունեն խորհրդածութիւններ անել, այն ժամանակ շատ խոշոր և նշանաւոր երևոյթներ թէ քաղաքական և թէ հասարակական կեանքում պէտք է մնային լրագրական էջերից դուրս։ Լրագիրը շտապում է տալ տեղեկութիւններ ընթացիկ կեանքի, նշմարվող հոսանքների, ժամանակագրական արտայայտութիւնների մասին, վերապահելով իրան յայտնել կարծիք, երբ նա յարմարութիւն կունենայ կամ ընթերցողներին թողնելով եղած նիւթերը կշռելու և քննելու։

Ընթերցողները, որոնք երկար ժամանակ հետևել են հասարակական կեանքի խնդիրներին և սովոր են կարծիքների և մտքերի փոխանակութեան, գնահատում են իրողութիւնների արժէքը, ցանկանալով, որ նրանց ձեռքը տրված լինի կարելին չափ շատ նիւթ։

Ահա մեր նկատողութիւնը։ Ճիշտ է, նա գրված է եզոպական լեզուով, բայց ի՞նչ կարող էինք մենք անել։ Միթէ հնար ունէինք ուրիշ կերպ խօսելու։

Եւ մեր ընթերցողները մեզ հասկացան։ Մենք շատ տեղերից ստացանք գոհունակութեան նամակներ այդ առթիւ։

Իսկ դուք այսօր յետին թւով յոխորտում էք և անցեալ օրերի դժոխքի տեղ, մամուլի ազատութեան եթերներ էք նկարագրում։

Բաւական է։ Եթէ ձեր մէջ չը կայ բարեխղճութիւն, նա կը գտնվի հասարակական խղճմտանքի մէջ։

Լսեցէք և այս։

Այն անձինք, որոնց դուք հալածում էիք ընտրութիւնների ժամանակ և աշխատում էիք քշել բոլոր ասպարէզներից, այն ժամանակները գլխաւոր գործողներն էին մեր հասարակութեան մէջ։ Նրանք իրանց սրտին մօտ առան գործը և եռանդուն կերպով աշխատեցին, որպէսզի Էջմիածինը կարողանայ պատւով դուրս գալ իր սկսած մաքառումից կառավարութեան հետ։

Այդ անձինք և Էջմիածին գնացին և Թիֆլիսում գործեցին և գաւառներում քարոզեցին։

Իսկ դուք ի՞նչ դիրք բռնեցիք դէպի նոյն այդ կալուածները Էջմիածնի կենտրոնական ժողովում։

Թողէք դուք պատմութիւնը հանգիստ, որովհետև դուք մաքուր ձեռքերով չէք մօտենում պատմագրութեան և ուզում էք կեղծել և ձեր ճաշակի համաձայն կազմել նրան։

Գիտութիւնը և արդարադատութիւնը բողոքում են ուժգնապէս։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Որևէ թիւրիմացութեան տեղիք չը տալու համար, հարկաւոր ենք համարում յայտնել, ինչպէս հաղորդում են մեզ Էջմիածնից, որ Սինոդի վճիռը Յոֆեանեան դպրոցի դէպքի մասին կայացել է համաձայն Կաթողիկոսի տնօրէնութեան, որ մակագրութեամբ յանձնել է Սինոդին իր որոշումը այդ խնդրի մասին։

Յոյս կայ, որ Վեհ. Կաթողիկոսը, հակառակ Մէլիք-Թանգեանների և նման ինտրիգանների ջանքերին, կը հաստատէ Սինոդի որոշումը և խնդիրը վերջնականապէս կը լուծվի։

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—Ոստիկանական դեպարտամենտում տեղեկութիւններ են ստացվել Տվերի նահանգից, որ այնտեղի մի քանի գաւառներում անկարգութիւններ են սկսվել։ Գիւղացիները հրդեհում են կալուածատիրական դաստակերտները, կտրատում են արքունի և մասնաւոր անձանց պատկանող անտառները։ Ընդհարումներ են տեղի ունեցել ժողովրդի և ստրաժնիկների միջև։ Ոստիկանական դեպարտամենտը կարգադրել է նահանգապետին եռանդուն միջոցներ ձեռք առնել շարժումը ճնշելու համար։ Վճռված է գաւառները զօրքեր ուղարկել։ («Нов. Путь»)

—Հոկտեմբերի 1-ին հրամայված է պատրաստ պահել Պետերբուրգի երկաթուղային գծի բոլոր ռազմ-գնացքները առաջ արշաւելու համար։ Գնացքների հետ գնում են հերթապահ զօրամասեր և գնացքի ծառայողներ երկաթուղային բատալիօնի զինուորներից։

—Հոկտեմբերի 4-ի գիշերը Պետերբուրգում խուզարկութիւն են ենթարկել Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկոյի աներոջ՝ Վորոնինի տունը, վերջինիս բացակայութեան ժամանակ։ Տարել են բոլոր թղթերը, մասնաւոր գրութիւնները և այլն։ Բնակարանում քաղաքապահներից պահակներ են նշանակվել։

—Պետերբուրգի զինուորական նահանգական դատարանի որոշումը կախաղանի հանել Պուտիլովի գործարանի նախկին բանւոր Պետզինակուն, քաղաքապահի սպանութեան մէջ մեղադրվելու համար, հոկտեմբերի 3-ին մահվան պատիժը փոխարինված է մշտական տաժանակիր աշխատանքի:

—Մարիուպոլից հաղորդում են «Товарищъ»-ին. «Եկաւ պատգամաւոր Միխայլիչենկոն և գործարանական բանւորների գումարած միտինգում ծանօթացրեց նրանց Պետական Դումայի գործունէութեան հետ, որից յետոյ անյայտացաւ: Ոստիկանութիւնը ապարդիւն կերպով շարունակում է որոնել նրան»:

—Պետական Դումայի նախկին անդամ Տարասենկօյի կալանաւորութեան առիթով «Рѣчь» լրագիրը լրացնում է հեռագրական գործակալութեան տուած տեղեկութիւնները: Նա հաղորդում է, որ ազգաբնակութիւնը գրգռվելով՝ հրդեհում է տեղական բնակիչ Վէզնեակի տունը, որը, հետամտելով մատնել էր Տարասենկօյին և նրա ընկեր Տօվանցին: Հրդեհի ժամանակ կօզակների ուրեադնիկը ատրճանակի գնդակով սպանում է 17 տարեկան պատանի Իվաշչենկօյին և վիրաւորում է 4 հոգու, որոնցից 3-ին ծանր կերպով: Բացի Տարասենկօյից և Տօվանցից կալանաւորված է զեմստվոյին բժիշկ Ելինենկօ:

—«Нов. Путь» լրագրին հաղորդում են, որ հոկտեմբերի 2-ին Վարշավայում կատարվել է խուզարկու բաժնի կառավարիչ «յայտնի» Գրինի մօր թաղումը: Թաղումից կառքով վերադարձող բաժանմունքի գործակալներին Կուրցելի հրապարակի վրա դիմաւորում են մաուզերեան ատրճանակների գնդակներով: Գործակալներից 3-ը ծանր կերպով վիրաւորված են, խուզարկուները մի քանի գնդակով, թեթև կերպով վիրաւորված են կառապանը և մի գործակալ: Կրակողներին աջողվում է փախչել: Վիրաւորների բարձրացրած աղաղակից օգնութեան են վազում պահակ զինւորները, որոնք մի քանի համազարկներ են արձակում փողոցում: Երեխան գրկին փողոցով անցնող մի կին վիրաւորվում է կրծքից, իսկ երեխան ձեռքից: Վիրաւորված է մի կին ևս:

—«Приб. Край» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվա-Վինդավեան երկաթուղու Պերետեօրկի կայարանում սեպտեմբերի 17-ին տեղի է ունեցել հետևեալ դէպքը. երբ պօստատար գնացքը Ստարո-Ռուսից դուրս գալով երեկոյեան ժամի 7-ին հասնում է յիշեալ կայարանը, համանուն գիւղի սովի մատնված գիւղացիների բազմութիւնը գալիս է կայարան և շրջապատելով գնացքը՝ ճանապարհորդներից փող է պահանջում, բացատրելով, որ նրանք սովամահ են լինում, որ իրանց անասունները, ուտելիք չը լինելու պատճառով, կոտորվում են և այլն: Մեքենավար Կուզելինի և գիւղացիների մէջ ընդհարում է լինում, որովհետև վերջինները շոգեմեքենայի ղեկից բռնած՝ չէին թողնում որ գնացքը առաջ շարժվի: Իսկ միւս գիւղացիները այդ միջոցին ջարդ ու փշուր էին անում վագոնների ապակիները: Ճանապարհորդներից մէկի գլուխը ջարդվեց այդտեղ, միւսները զանազան վէրքեր ստացան: Սարսափը տիրեց բոլորին սովալլուկ գիւղացիների կատաղութեան առաջ: Նկատելով առաջից եկող ապրանքա-մարդատար գնացքը, մեքենավար Կուզելինը սուլոց տուեց և յանկարծ տեղից շարժվեց: Երբ ապրանքա-մարդատար գնացքը կանգ առաւ կայարանում, գիւղացիները այդտեղ էլ սկսեցին ջարդոտել թէ վագոնների և թէ կայարանի լուսամուտների ապակիները և ուշ գիշերը միայն վերադարձան գիւղ: Կայարանում ոչնչացել են ուտելիքների բոլոր պաշարները:

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 4-ին պրեմիէր-մինիստր Ստոլիպինը ընդունել է Մոսկվայի համալսարանի պրոֆեսորների կողմից ուղարկված պատգամաւորութիւնը: Պրեմիէրը որոշ պատասխան չէ տուել պատգամաւորութեանը, յայտնելով, որ նա նախ պէտք է ծանօթանայ գործի հետ և բանակցութիւն սկսի այդ առիթով Մոսկվայի քաղաքապետի հետ: Այդ հարցը շուտով կը քննվի մինիստրների խորհրդի մէջ: («Н. П.»)

—Ազատ վերանորոգութեան կուսակցութեանը մերժել են օրինական ճանաչել, որովհետև նրա նպատակները հասարակաց խաղաղութեան համար սպառնալի բնաւորութիւն ունեն: («Нов. Путь»)

—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կից կազմված յատուկ ժողովը մշակել է մի նախագիծ եկեղեցական-ծխական դպրոցները մինիստրութեան իրաւասութեանը ենթարկելու համար: Այդ նախագիծը նախ և առաջ պէտք է քննութեան ենթարկվի մինիստրների խորհրդի մէջ, որը և պէտք է որոշի հարցը իր ունեցած գումարներով, արդեօք, պէտք է յանձնվին դպրոցները թէ առանց գումարների: Եկեղեցական դպրոցները ընդամենը ունեն 9 միլ. ռուբլի անձեռնմխելի գումար: Հարցը որոշվելուց յետոյ այդ նախագիծը պատրաստ կառաջարկվի Պետական Դումային:

—«Рѣчь» լրագիրը հաղորդում է, որ, տարածված լուրերի համաձայն, Պետական Դումայի ընտրութիւնները նշանակվում են 1907 թւի յունվարի 15-ին:

—Վերջին ժամանակներս մամուլի մէջ սկսել են լոյս տեսնել լուրեր նոր փոխառութիւն անելու մասին: «Страна» լրագիրը հաստատ աղբիւրից տեղեկացել է, որ փոխառութեան մասին տարածված այդ լուրերը միանգամայն անհիմն են:

—Ներքին գործերի մինիստրութեան մէջ վերջին օրերս տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ, «Страна» լրագրի ասելով, ընդդիմադիր կուսակցութիւնների ագիտացիաները թուլացնելու նպատակով, վճռել են արգելել այդ կուսակցութիւններին բաժանել ընտրողներին նախօրօք տպագրված թեկնածուների ցուցակները, որ իւրաքանչիւր ընտրող թեկնածուների անունները պէտք է գրէ հէնց ընտրողական առեանի ներկայութեամբ:

—«Око» լրագրի ասելով, մահվան պատիժը վերացնելու օրինագիծը յանձնված է Պետական Խորհրդի ստատս-քարտուղար Սաբուրօվի նախագահութեամբ կազմված մասնաժողովի քննութեանը, որը գումարվելու է դեկտեմբեր ամսից ոչ վաղ:

—«Пет. Лист.» լրագիրը հաղորդում է, որ գեներալ Տրեպօվի մահվամբ պալատական կուսակցութիւնը կորցրել է այն նշանակութիւնը, որ ունէր նա առաջ: Ներկայումս ամբողջ ազդեցութիւնը կենտրոնացած է մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի ձեռքում: Պետերհօֆում նրան վերաբերվում են լիակատար վստահութեամբ:

—Յամառ կերպով խօսում են, որ պրեմիէր-մինիստր Ստոլիպինը վճռել է ժամանակաւորապէս փակել բոլոր բարձրագոյն դպրոցները: Ենթադրում են, որ նրանք բոլորն էլ բացվեն հոկտեմբերի 17-ից յետոյ միայն, որովհետև երկիւղ են կրում, որ այդ օրը չը նայելով ձեռք պէտք է առնվեն արտակարգ միջոցներ, այնուամենայնիւ չի յաջողվիլ արգելք լինելու միտինգներ կազմելուն, եթէ որ դպրոցները բաց կը մնան:

—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը մի զեկուցում է ներկայացրել մինիստրական խորհրդին, որտեղ նա ամենախիստ լեզուով բողոքում է այն ռեպրեսիաների դէմ, որ ադմինիստրացիայի մի քանի առանձին ներկայացուցիչներ ձեռք են առնում համալսարանների վերաբերմամբ:

—«Пет. Газ.» լրագիրը հաղորդում է, որ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի տարեդարձի օրը սպասվում է կառավարչական ուկազ ազգաբնակութեանը շնորհվելիք մի քանի արտօնութիւնների վերաբերմամբ: Այդ արտօնութիւնների մէջ մտնելու են քաղաքական մեղադրեալներից շատերին ներումն շնորհելը, ժամանակաւոր դաշտային դատարանների օրէնքների ոչնչացումը, միևնոյն ժամանակ թոյլատրվում են գոյու[illegible]ն ունեցող քաղաքական բոլոր կուսակցու[illegible]երին ամենալայն չափերով ագիտացիայի [illegible]ամար ժողովներ գումարել:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—Սեպտեմ. 29-ին Մոսկվայի համալսարանում, տեսչի թոյլտուութեամբ, նշանակված էր ուսանողական երկու ժողով, լսելու ուսանողական հետևեալ ռեֆերատները. «անիշխանականութեան քննադատութիւնը», «տեխնիկական վշտի փիլիսոփայութիւնը»: Վերջին ռեֆերատը պէտք է կարդացվէր ուսանողութեան փիլիսոփայական կրուժոկի ժողովում: Մոսկվայի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ, որ քաղաքապետի միջոցով յանձնված էր համալսարանի տեսչին, վերոյիշեալ ռեֆերատները տեղի չունեցան, միևնոյն ժամանակ տեղական ոստիկանատեսից յայտնել էին, որ, եթէ հակառակ կարգադրութեան, արգելված ժողովը այնուամենայնիւ տեղի ունենալու լինի, ոստիկանութիւնը ստիպված կը լինի իր միջոցները գործադրելու: Տեսուչը իր օգնականի հետ գնաց այն սրահը, որտեղ պէտք է կայանար ընթերցանութիւնը և հաղորդելով ուսանողներին ստացված կարգադրութեան մասին, խնդրեց, ոստիկանական միջամտութիւնից խուսափելու համար, ցրվել: Հաւաքված սակաւաթիւ ուսանողները խաղաղ ցրվեցին:

—Սեպտեմբերի 30-ին Մոսկվայի քաղաքապետը ուղարկել է համալսարանի տեսչին մի գրութիւն, որտեղ մատնանշում է, որ, չը նայելով մի քանի անգամ արված նախազգուշացումներին, այնուամենայնիւ համալսարանում տեղի են ունենում կողմնակի անձանց ժողովներ յեղափոխական կօխատոր մասնակցութեամբ, այնտեղ միևնոյն ժամանակ յեղափոխական գրականութիւն է վաճառվում և հանգանակութիւն կատարվում յեղափոխական նպատակների համար: Քաղաքապետը պահանջում է տեսչից ամենաեռանդուն միջոցներ ձեռք առնել արգելելու այդ տեսակ ժողովները, հակառակ դէպքում սպառնում է տեսչին և պրոֆեսորական խորհրդին պատասխանատուութեան ենթարկել:

—Սեպտեմբերի 30-ի երեկոյեան, ուսանողական ժողովները անսպասելի կերպով արգելելու պատճառով, կայացել է համալսարանական կենտրոնական մարմնի արտակարգ ժողովը: Կենտրոնական մարմնի ներկայացուցիչները տեսնվեցին տեսչի և իր օգնականի հետ, որոնցից իմացան, որ համալսարանական խորհուրդը անկարող է ապահովել առաջիկայ ուսանողական ժողովները ադմինիստրացիայի միջամտութիւնից: Կարճատև խորհրդակցութիւնից յետոյ համալսարանի կենտրոնական մարմինը վճռեց համուսանողական ժողովը յետաձգել:

Համալսարանական սենեակների փակման պատճառով համալսարանի կենտրոնական մարմինը նիստ էր գումարել բակում: Կենտրոնական մարմինը վճռեց վճռական քայլեր չանել, այլ սպասել պրոֆեսորների խորհրդի կայացնելիք որոշումին: Հոկտեմբերի 1-ին արդէն փակված էր համալսարանի դռները ուսանողների համար ժամանակաւորապէս:

ԻՄ ԲՈՂՈՔԸ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

30—35 տարի է՝ «Մշակը» մտրակում է մեր միջի ծրխակեր կղերականներին, պահպանողականներին, փտած յետամնացներին, քարոզելով միանգամայն ճշմարտութիւն, ազնութիւն և ազատամտութիւն:

Ես չեմ յիշում երբեք, որ մեր մէջ սովորութիւն դարձած աղտեղութիւնների որևէ կէտը զանց անէր «Մշակը» և երևան չը հանէր, աշխատելով իր արդար զայրոյթով վերջ տալ:

Քիչ թէ շատ շիտակ անձնաւորութիւնը ձեռքը խղճին կը խոստովանի, որ «Մշակը» երբէք մեր պակասութիւնները չէ ծածկել և ամենևին չէ քաշվել նոյն իսկ օտարների առաջ դատափետելու:

Ո՞ր մի ազգային կուլտուրական գործերի մէջ նա իր ծառայութիւնը չէ մատուցել:

Ո՞ր մի հիմնարկութեան, ուսումնարանական խնդիրների, գիւղացիական ցաւերի ժամանակ նա իր ազդու ձայնը չէ բարձրացրել:

Անողոք փորձանքների, դժբաղդութիւնների օրերում ի՞նչ դեր է կատարել «Մշակը»: Սովի, երկրաշարժի, ջրասվածների, հրդեհների, աղէտների, հիւանդութիւնների և վերջապէս կոտորածների ժամանակ ո՞վ է կարողացել անել այն փափուկ բարոյական պարտականութիւնները, ինչ «Մշակն» է արել...

Անգլուխ ընտանիքի հիւանդ այրի զաւակներին սովից ազատելու համար, ուսումնածարաւ աղքատ ուսանողին համալսարան ուղարկելու համար, խեղճ մեռնող օտար երկրում անընչացած դիակը հողին յանձնելու համար, անճառ արհեստաւորի դրութիւնը փոքր ինչ բարելաւելու համար «Մշակն» անտարբեր չէ եղել և չէ զլացել իր ձրի յայտարարութիւններով, խրախուսանքներով, խրատներով, պահանջներով յօդուածներ տալ և որևէ կերպով օգնել, մխիթարել դիմողներին:

Այո, օգնել նոյն իսկ փողով. օրինակները բազմաթիւ են:

«Մշակը» յենարան է եղել և է մեր բոլոր անկարողներին, յուսահատվածներին:

«Մշակի» գերակշիռ դիրքը, ձայնը, դերը գնահատվել է ոչ միայն Կովկասում և Ռուսաստանում, այլ և Պարսկաստանի խուլ անկիւններում, Թիւրքիայում, Հնդկաստանում, Եգիպտոսում...

«Մշակը» հետևել է արտասահմանի և Ռուսաստանի բոլոր ազատամիտ թերթերին. ուրանինք:

Վերջապէս «Մշակը» պատճառ է եղել մեր գրել-կարդալ սովորելուն. այս իրականութիւն է:

Այս ամենը զգալով և հասկանալով, այնուամենայնիւ բողոքում եմ «Մշակի» խմբագրութեան դէմ:

Ինչո՞ւ:

Որովհետև այժմ էլ չէ ցանկանում իրան դաւաճանել և «ժամանակի հոսանքի հետ գնալ»:

Որովհետև նա իր մտրակով հարուածում է խալիֆաններին, զուլզուլներին, ամբոխաւարներին...

Որովհետև «ազգային» փաստաբանի «ձրի վարող» տգեղ վարմունքն երևան է հանում:

Որովհետև «սօցիալիստ» բանակալների, բիւրօկրատների բաշիբօզուկութիւնների դիմակը պատռելով՝ ատառը ցոյց է տալիս հասարակութեան:

Եւ որովհետև էֆիմվերդիով առաջնորդվող փահլեան Թոփչիեմների տափակութիւնները արհամարհում է և չէ թողնում այդ գլուխները կորցրած գուշակող տխմարներին՝ տանջված ժողովրդի անունը շահագործել յանուն իրանց գրպանների:

Այո, նա իր դերումն է, նա իր հուժկու և արդար ձայնը բարձրացրել է իր սկզբունքի համաձայն, որից սոսկում են փարիսեցիները, կեղծաւորները, անարժան «տէր ու տնօրէն» ղեկավարները և ստորաքարշութիւնների դիմում...

Ահա թէ ինչու համար եմ բողոքում ես:

Եւ եթէ այսպէս շարունակվելու լինի, հաւատացէք, մեզ փրկութիւն չը կայ այլևս և աւելի զուլումների ենք հանդիպելու:

Եթէ չէք հաւատում ասածներիս, ապա կարդացէք առանց ծիծաղելու հայհոյանքը զարգացնող թերթի՝ «Երկրի» 3-րդ համարում աշխարհահռչակ Ա—Դօի նամակը:

Պարոն Ա—Դօն հրաժարվում է «Մշակ»-ից:

Ա.—Դօն չէ բարեհաճում այլևս հաշիւներ ունենալ «Մշակ»-ի հետ:

Ա—Դօն մեզ զրկում է իր հեղինակաւոր գրչից:

Ա—Դօ:

Հզօրագոյն Ա—Դօ... Ի՞նչ կանենք մենք այսուհետև. այս ինչ զուլում բերիք մեր գլխին: Խեղճ ենք, մեղք ենք, խնայեցէք մեզ, մեզ՝ «Մշակ» կարդացողներիս:

Հաշիւներդ «Մշակ»-ի հետ վերջացած մի համարեք, ի սէր Ալլահի:

Մեզ մի զրկէք Ձեր...

Անչափ ցաւում ենք, պ. Ա—Դօ, որ անզօր ենք բանի կերպով ստիպել «Մշակ»-ի խմբագրութեանը՝ ճշմարտութիւնը թաքցնելու, տիրացուներին սիրելու...

Բայց պ. Ա—Դօն այնքան էլ խամխրից չէ: Նա այժմ ցանկանում է իր գլուխը պահել «սօցիալիստ», «ազգային գործերը ձրի վարող» փաստաբանների և «ժողովրդի շահերի պաշտպան» սիւլլիքների թևերի մէջ:

Ա—Դօն էլ է «ազգային» դառնում:

Գուցէ բօզէն է ստիպում:

Աջողութիւն:

Բար-Տի

Ալեքսանդրապոլ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բարսումգիւղ (Գանձ. գաւ.), հոկտ. 3-ին

Սրանից մի քանի տարի առաջ գօլիցինեան չարանենգ տարեգրութեան ժամանակներում Գանձակի գաւառի գիւղական հասարակութեան (общество) կազմակերպման մէջ զգալի փոփոխութիւններ տեղի ունեցան, որ ժամանակին մամուլն արձանագրեց: Նախկին հասարակական կազմը, որ բաղկացած էր մի քանի գիւղերից, նոր կարգադրութեամբ՝ մի քանի առանձին-առանձին տանուտէրական համայնքներ ի մի ձուլվեցին և կազմեցին միմի աւելի մեծ հասարակութիւն:

Չը նայած գիւղացու համար պաշտօնական այդ կարգադրութեան անձեռնտու և աննպատակայարմար լինելուն՝ այնուամենայնիւ կարգադրութիւնն եղաւ և գործնականութեան մէջ մտաւ: Ժամանակին թէր ու դէմ կարծիքներ չեղան, սակայն մի տարին չանցած դժգոհութիւններ և նոյն իսկ օրինական ճանապարհով բողոքներ եղան այդ միացման դէմ, որի հետ կապված էին մի քանի անյարմարութիւններ: Շրջանը մեծացաւ, երթևեկութիւնը դժուարացաւ: Գիւղացին, որն իր գործի համար գնում էր 5-6 վերստ, այժմ ստիպված 20-25 վերստ պէտք է գնար. հեռաւորութեան պատճառով շատ անգամ էլ նա իր օգուտը կամ վնասը բարձի էր թողնում, որից ծագում էին դժգոհութիւններ և անբաւականութիւններ պաշտօնական անձանց կողմից: Ընդհանուր տեսակէտով պէտք էր, որ գիւղական ծախսերը նուազէին, բայց դեռ մի քիչ էլ աւելացան: Ահա այս և նման պարագաներ պատճառ եղան նոր կազմից կրկին հինը փոխվելուն:

Այժմ մեր շրջաններում տանուտէրական ընտրութիւններ են: Պէտք է հին փաշայական ընտրութիւնները քամուն տալ. ազատ խիղճ, ազատ ձայն և ազատ քուէ. թող կորչեն կողմնակի ճնշումները, կորչեն բարեկամական կապերն ու միտումները:

Ամսիս 1-ին Բարսում, Գասմակեր և Նուզգեր գիւղերից նոր կազմված հասարակութեան (նախկին Զարդախլուի հասար.) տանուտէրի ընտրութիւնն էր: Չը նայած դեռ ժողովրդի տհասութեան ընտրողական սկզբունքում, այնուամենայնիւ մարդ մխիթարվում է ապագայի հեռանկարով, երբ լսում է ազատ վիճաբանութիւններ և ազատ կարծիքներ անհատների կողմից: Տանուտէր ընտրվեց Բարսում գիւղացի Սարգիս Աղաջանեանը: Չը նայած որ գասմակերցիները (սակայն բացառութեամբ) սև քուէ տուին, ստիպված մի այլ հանգամանքից, սակայն վերջը խոստովանեցին, որ Աղաջանեանը ամենաարժանաւորն էր:

Մեր կարծիքն ևս դրական է ընտրութեան վերաբերմամբ. միայն մի նկատողութիւն, որ Աղաջանեանի նախկին տանուտէրութեան ժամանակ մի քանի անգամ նկատվել է, որպէս բացասական կողմ. երբեմն պատահել է, որ հասարակութեան շահը զոհել է իր անհատական պատուին և այդ ոչ թէ որևէ դիտաւորեալ նպատակով, այլ լոկ ադմինիստրական պաշտօնեաների երկիւղից: Իսկ այժմ, երբ ներկայ քաղաքական մթնոլորտը համեմատաբար նախկինին փոփոխվել է, յուսով ենք, որ այդ միակ երկչոտ պակասութիւնն էլ կը հարթէ և իր վրա դրած ժողովուրդի յոյսը կարդարացնէ: Ուրեմն ի սրտէ աջողութիւն ենք ցանկանում:

Այս ամսի 2-ին Բարսում գիւղում բացվեց ծխական ուսումնարան: Գիւղացու ուսումնասիրութեան մասին խօսք չէ կարող լինել, մանաւանդ երբ վարժապետը քիչ իր սրտին մօտ է լինում, սակայն երբ հարկաւոր է գործին ձեռնամուխ լինել և ուսումնարանական այս կամ այն պակասը լրացնել, իրանց սառն ու թմրիչ անտարբերութեամբ միանգամայն մարդուս գլխին սառը ջուր են ածում: Եւ այս սևերես աղքատութեան լքված օրերում գիւղացին դժուարանում է խօսք առնել, խօսք լսել, ոգևորվել... Երանի թէ գիւղացու հետ ուսուցիչը ոչ մի նիւթական կապ չունենար...

Բայց և այնպէս չարատանջ հայ ուսուցիչը չը պէտք է ընկճվի նիւթականի անհրաժեշտ պահանջման տակ, երբ ցանկանում է լինել իսկական ուսուցիչ:

Յ. Երիցեան

Յ. Գ.—Գիւղիցս վերջին գողացված մի ձին և 2 զոբաղը բռնվեցին թուրքական Մոսուլ գիւղում և յետ բերվեցին ադմինիստրացիայի աջակցութեամբ. միայն գողութիւնը, որ վերագրում էինք հայերին, դեռ չէ բացված ու պարզված: Սկսել են աշնանային սարսափելի երաշտներ. չորով ցանած ցանքերը փչանում են:

Նոյն

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԹՂԹԱԿՑԻ ԿԱՐԾԻՔԸ ՊՐԵՄԻԵՐ ՍՏՕԼԻՊԻՆԻ ՄԱՍԻՆ

«Р. В.» լրագիրը ստացել է իր թղթակցից հետևեալը.

Լօնդօն, 24 սեպտեմբերի: Անգլիական լրագիրների նման, «National Review» թերթն էլ յատուկ թղթակից է ուղարկել Ռուսաստան: «National Review» պահպանողական ուղղութեան թերթ է (միևնոյն խմբագրութիւնն է, ինչ որ «Times»-ը), որի ընթերցողները գլխաւորապէս «հիմնաւոր» շրջաններ են, որոնք կողմնակից են խիստ կարգապահութեան և սկեպտիկաբար են վերաբերվում դէպի զանազան տեսակ գեղեցիկ ծրագրները: Թերթը թղթակից է ընտրել մի մարդու, որ «սաստիկ խստապահանջ է», գիտէ ռուսերէն լեզուն և, ինչպէս երևում է, մեծ կապեր ունի ամենաբարձր շրջաններում: Իր հեղինակաւորութեամբ շրջաններում ունեցած ահագին կապերով, որոնք մատչելի չեն հասարակ մահկանացուներին, «National Review»-ի «յատուկ թղթակիցը» յիշեցնում է տիպօրսաբար մի անգլիացու, որ «Ռուսաստանի մասին» յայտնի գրքի հեղինակն է: Նա կօնսերվատոր է, նրա ամբողջ համակրութիւնը այն «վերինների» կողմն է, որոնց մէջ նա, երևի, persona qratissima է համարվում: Տեսնենք թէ ինչ է նա հաղորդում այդ թերթին: Անգլիացին վկայում է, որ Ռուսաստանը ներկայումս այնպիսի լուրջ մօմենտներից մէկն է վայելում, երբ «ժողովրդի բաղդը գրված են օրօրվող կշիռքի վրա: Բաւական է մի խթան, որ ընկնի այս կամ այն աչքը»: Իշխանութեան ղեկի մօտ թղթակիցը տեսնում է կանգնած այնպիսի մարդիկ, որոնք «լիլիպուտների միջոցներ միայն ունեն, մինչդեռ նրանք հերքուլեսեան քաջութիւն պէտք է գործին»: Դրութեան տարօրինակութիւնը աւելանում է նոյնպէս նրանով, որ մինիստրները յարմարվում են Պենէլօպաների ցանկութիւններին. «Նրանք իրանք պէտք է քանդեն այն ցանցը, որ հիւսել են, գտնվելով առաջ ռեակցիօն կաբինետում»: Թղթակիցը, որ, երևում է լաւ է ճանաչում Ստոլիպինին, խորին յարգանքով է վերաբերվում դէպի նրան իբրև մի ազնիւ մարդու և շեշտում է նրա ազնւութիւնը, արիութիւնը և աշխատասիրութիւնը, բայց պրեմիէրը չէ՞ որ պիտի փրկէ Ռուսաստանը: Ստոլիպինը ազնիւ բիւրօկրատ է, արտասովոր արիութիւնով օժտված: Հեղինակը նկատում է, որ Ստոլիպինը մասնակցում էր ռեակցիօն կաբինետում Գօրեմիկինի, Ստիշինսկու և Շիրինսկիյ-Շախմատովի հետ միասին և զարմանում է, թէ ինչպէս կարող էր պատահել այդ: «Ինչո՞ւ Ստոլիպինը պաշտպանում էր Գօրեմիկինի ծրագիրը, որը հանդիսանում է բացառութիւն պրեմիէրի ներկայ ծրագրին: Ինչո՞ւ այժմ նա հաշտվում է իր կաբինետում մնացող այնպիսի մարդկանց ներկայութեան հետ, որոնք իրանց աշխարհայեացքներով չեն համապատասխանում իրան: Ի՞նչու նա հալածում է մի այնպիսի կուսակցութիւն, որը ոչ մի առնչութիւն չունի յեղափոխականների հետ»: Այդ հարցերին թղթակիցը պատասխանում է, որ Ստոլիպինը չէ պատկանում այն պետական գործիչների չափին, որոնք կրիտիքական րօպէին ասում են ապարանքում՝ «կամ ընդունեցէք առաջարկութիւնս, որ ձգտում է, իմ հասկացողութեամբ, հայրենիքի բարօրութեան, կամ թէ իմ հրաժարականը տուեցէք»: Ստոլիպինի արիութիւնը պասիւ բնաւորութիւն ունի, զօրեղ է նա միայն շեղված շաւիղներով գնալու համար: Պրեմիէրը չունի ոչ հեռատեսութիւն, ոչ իրերի կարևորութիւնը ըմբռնելու և ոչ էլ մարդկանց ճանաչելու ընդունակութիւն: «Վաճառվող վարձկաններից, որոնցից կազմված է ներկայի բիւրօկրատիան, նա սպասում է անձնուրացութեան հերոսական քաջագործութիւններ և դրա վրա էլ հիմնում է իր յոյսերը»: Կուրոպատկինի նման՝ Ստոլիպինը համոզում է Ռուսաստանին լինել համբերող: Նա յոյս ունի յաղթելու յեղափոխութեանը: «Ստոլիպինի դիմումների ինքնավստահ տոնը յիշեցնում է բիւրօկրատիայի ունեցած տրամադրութիւնը պատերազմից առաջ»: Բիւրօկրատիան այն ժամանակ ոչ միայն հաւատացած էր իր յաղթութեան վրա, այլ և թելում էր նրա հետևանքները. այսինքն հաղորդում էր արտասահմանեան թղթակիցներին խաղաղութեան այն պայմանները, որ նա պէտք է թելադրէր «Տօկիօյի փլատակների վրա»:

Թղթակիցը յիշատակում է ռուսաց մինիստրների բնորոշ գիծը ևս, որ շարունակում է զարմացնել օտարերկրացիներին, այն է՝ արհամարհել երկրի հասարակական կարծիքը և հաճոյանալ արտասահմանեան լրագիրների թղթակիցների առաջ: Անգլիայ-ում այլ կերպ է լինում: Մինիստրը ուշադրութեան է առնում միայն անգլիական հասարակական կարծիքը: Եթէ նա կարծում է, որ իրան լաւ չեն հասկացել, ինտերվիւ (ունկնդրութիւն) է տալիս իր բարեկամին, որը և իր կողմից հերքումն է գրում: Եթէ մի որևէ լուրջ հարց է յարուցված, մինիստրը օգուտ է քաղում առաջին մեծ միտինգից և անձամբ պարզում է իրերի դրութիւնը այդ հարցի նկատմամբ: Անգլիական մինիստրութեան համար նշանակութիւն չունի, թէ ինչ պէտք է ասեն օտարերկրեայ լրագիրները. նա միայն կարևորութիւն է տալիս իր հայրենիքի կարծիքին: Հարաւ-աֆրիկական պատերազմի ժամանակ, օրինակ, օտարերկրեայ լրագիրները պախարակում էին Չեմբերլենին, բայց գաղութների մինիստրը հոգ էր տանում միայն, որպէսզի անգլիական ընտրողները իրան կողմնակից լինէին: Բայց մեզանում այդպէս չէ: Մեր մինիստրները, որ ոչ մի նշանակութիւն չեն տալիս Ռուսաստանի հասարակական կարծիքին, ուղղակի քծնում են արտասահմանեան փողոցային թերթի մի որևէ թղթակցի առաջ: «Ստոլիպինի ունեցած հաւատը դէպի արտասահմանեան ռեկլամը, ասում է «Mational Review»-ի յատուկ թղթակիցը—նրա հակառակորդներին նիւթ է մատակարարում կծու քննադատութեան համար: Պ. Ստոլիպինը, երևի, ենթադրում է, որ օտարերկրեայ լրագիրների դիւմինաւոր թղթակիցների բարեհաճ վերաբերմունքը բաւական է Ռուսաստանի մէջ բոլոր դժուարութիւնները յաղթելու համար: Դրա հետևանքը լինում է մի անվերջ շարք interview-ներ, որտեղ փառաբանվում են այն պրօգրամի գեղեցիկ արժանաւորութիւնները, որն այնքան աղքատ ու նիհար է և մինչև այն աստիճան հնացած, որ նրան կարիք չը կար վերականգնել անգամ: Ժողովրդին այժմ հարկաւոր են բարենորոգումներ, գործ, այլ ոչ տպագրական գոյնով կեղտոտված թուղթ»: Այդպիսի պրօգրամներով մտածում էին կերակրել ամբողջ Ռուսաստանը: Թղթակցի ամբողջ համակրութիւնը թագի կողմն է, բայց նա յայտնում է, որ «այն ձեռափայտը, որի վրա նա յենվում է», այսինքն՝ Ստոլիպինի բիւրօկրատական կաբինետը, կոտրված է: Պրեմիէրը, չը նայելով իր բոլոր արժանաւորութիւններին, իր ամբողջ գործունէութեամբ ցոյց տուեց, որ կարողանում է միայն pas de clerc-ներ անել: Դա յարդի մի կտոր է մայլչարեմի յորձանքների մէջ: Այդպիսի եզրակացութեան է գալիս «Mational Review» հոկտեմբերեան գրքոյկի յօդուածի հեղինակը:

Sh.

ՊՕՍՏԱՏԱՐ ԳՆԱՑՔԻ ԹԱԼԱՆՎԵԼԸ

«Уфим. Вѣстн.» լրագիրը հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում պօստատար գնացքի վրա սեպտեմբերի 21-ին կատարված յարձակման մասին:

Սամարայից գնացող բոլոր արտելշչիկների թիւը 6 հոգի էր, որոնց միևնոյն ժամանակ ուղեկցում էին 6 զինված զինւորներ:

Նրանք բռնել էին II կարգի վագոնի երկու բաժանմունքը, իսկ երրորդում գնում էին ճանապարհորդները: Բոլոր արտելշչիկներն էլ ունէին մի-մի ատրճանակ:

Իւմատօ կայարանում արտելշչիկներից մէկը երկու զինւորներով անցնում է I կարգի վագոնը, այդպիսով, 5 արտելշչիկներ մնացին միայն 4 զինւորների հետ:

Արտելշչիկների և նրանց պահակների բռնած բաժանմունքից թէ դէպի գաւիթը և թէ դէպի ճանապարհորդների բաժանմունքը տանող դռները ներսից ամրացված էին փոքրիկ տախտակներով:

Ուֆայից ոչ հեռու, դեռ չը հասած երկաթուղային կամուրջին, 300 քայլ վրա, գնացքը յանկարծ կանգ առաւ: Մենք կարծեցինք,—հաղորդում է ականատեսը,—որ զինւորներ են նստում գնացքը ուղեկցելու կամուրջի վրայով: Բայց հարևան բաժանմունքում այդ միջոցին սաստիկ աղմուկ բարձրացաւ, այնտեղ մէկը քաշքշվում էր, երևի կռւում էր: Մենք դեռ չէինք արտասանել մի քանի խօսք, երբ մի քանի անգամ ատրճանակի ձայներ լսվեցին: Դա յարձակումն էր: Դուռից ներս մտնող առաջին չարագործը վագոնի դռան առաջ հանդիպեց դռան մօտ կանգնած պահապանին, որը սուինով ուզում էր ճեղքել նրան, բայց յարձակվողը մի ակնթարթում ճանկեց մի ձեռքով սուինը և վեր բարձրացնելով, միևնոյն ժամանակ միւս ձեռքով մի քանի անգամ կրակեց ատրճանակը ուղղակի զինւորի կրծքին ու տեղն ու տեղը սպանեց:

Մի վայրկեանի մէջ վիրաւորվեց երկու ձեռքից միւս զինւորը նոյնպէս, իսկ այդ միջոցին ներս մտնող միւս չարագործները, իրանց «պարագլխի» կտրական հրամանի համաձայն, մի ակնթարթում զինաթափ են անում միւս զինւորներին ևս, կապոտում նրանց և ապա սկսում արտելշչիկների հետ հաշիւ տեսնել: Վերջիններս ստիպված եղան յանձնել իրանց ատրճանակները, շղթայակապ փողերի արկղները, նրանց բանալիները և մահվան սարսափի ներքոյ, հանգիստ նստել, ոչինչ չանել:

Դիսցիպլինան, անպայման հնազանդութիւնը «ատամանին», ինչպէս որ այդ ասում էին իրանց «պարագլխին» յարձակվողները, արագութիւնը և չափված շարժումները, ճարպիկ գնդակաձգութիւնը ատրճանակներից, վճռականութիւնը և միևնոյն ժամանակ սիրալիր վարվեցողութիւնը միանգամայն զարմանալի էին: Մասնակցողների մեծ մասը կիսադիմակներ էին հագել:

Արտելշչիկների արկղները ցած էին իջեցնում և մէկ-մէկ բաց անում հէնց գծի վրա:

Մի հետաքրքիր մանրամասնութիւն են հաղորդում. արտելշչիկներից մէկը դիմում է նրան, որին ամենքը հրամանատար էին անւանում, և խնդրում իրան վերադարձնել իր սեպհական 400 ռուբլին. դրան հրամանատարը պատասխանում է. «Յետոյ կուղարկենք, այժմ ժամանակ չը կայ»:

Մինչ կատարվում էր այդ ամենը երկրորդ կարգի վագոնում, դուրսը, գնացքին մօտիկ, զինված մարդկանցով շրջապատված, որոնք [illegible] էին գնդակները. կատարեալ հրացանաձգութիւն էր կատարվում:

Գլուխները դուրս չը հանելու համար արված նախազգուշացումները և գնդակների առաջ լռութիւնը արվեց այնպիսի որոտընդոստ ձայնով, որ նրան կարող էր չը լսել մեռելը միայն: Այդ գնացքի մէջ, բացի այդ 6 զինւորներից, 2 զինւոր կար շոգեշարժի վրա և 6 հոգի էլ պօստատար վագոնում, բայց վերջիններս ամրացել էին վագոնում և չէին երևում: Շոգեշարժը՝ առաջ շարժվելու արած դիտաւորութեան համար՝ գնդակների տարափի ենթարկվեց. բացի դրանից շոգեշարժի վրա պետարդա նետվեց, որը պայթեց խլացուցիչ դղրդիւնով: Դրանից յետոյ նա հեզութեամբ կանգնած մնաց մինչև կէս գիշեր:

Մինչև որ դուրս հանեցին արկղները վագոնից ու բաց արեցին, բաւականին ժամանակ անցաւ, յամենայն դէպս կէս ժամից ոչ պակաս: Այդքան ժամանակամիջոցում աւազակախմբի հրամանատարին մի քանի զեկուցումներ տուեցին: Այսպէս օրինակ, լսվում էին հետևեալ դարձուածքները. «Պ. հրամանատար, Գրիշկան վիրաւորվել է»: Ապա նրան էլի յայտնեցին. «Մէկը սպանված է, երկուսը վիրաւորված»: Այս վերջինի համար պատասխանեց. «Շատ ափսոս»:

Երբ այդ ամբողջ գործը վերջացաւ, բոլոր յարձակվողներն էլ գնդակաձգութեամբ անյայտացան թփերի մէջ:

Ականատեսի կարծիքով, յարձակվողների թիւը հասնում էր 30-ի: Իւրաքանչիւրի պարանոցին կից կախված էր մի փող, որը ծառայում էր ազդանշանի համար. փողահար ազդանշանով նրանք միմեանց մօտ էին կանչում և նոյն ազդանշանով էլ նրանք յետ նահանջեցին: Նրանց գօտիների բլեխայի վրա կարծես մի ինչ որ նշան կար կամ №: Նրանց ատրճանակները հիանալի էին, գնդակահարութիւնը իր անխնայութեամբ միանգամայն երևելի էր, իսկ գնդակների որոտը՝ արտասովոր: Գնդակները ծակում էին II կարգի վագոնում երկաթեայ պատերը, որոնք ներսից պատած էին թաղիքով: Հաղորդում են նոյնպէս, որ երբ խմբապետին ասացին իրանց ընկերներից մէկի վիրաւորվելու մասին, պատուիրեց՝ «վերցրէք կապել և ձիու վրա դնել»:

Կորած փողերի ընդհանուր գումարը 241,000 ռուբլու է հասնում:

Պօստային զինւորներից ապահով լինելու համար չարագործները պօստային և արտելշչիկների վագոնի միջև նշանակել էին մի զօրեղ պահակախումբ:

ՄՕՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մոսկվայի համալսարանի տեսուչ Ա. Ա. Մանուլօվը «Бирж. Вѣд.» լրագրի աշխատակցին, ի միջի այլոց, ասել է հետևեալը.—Իր պահանջներով բարձր ադմինիստրացիան համալսարանը հասցրել է մի այնպիսի դրութեան, որից դուրս գալու համար ուրիշ ելք չը կայ, բայց եթէ փակել վերջինս, եթէ որ նա պնդելու լինի նրանց կատարելու մասին: Առանց մի որևէ առիթի ադմինիստրացիան միջամտեց համալսարանի ներքին կեանքին, այն էլ հէնց այն ժամանակ, երբ ոչ մի հիմք չը կար երկիւղ կրելու պարապմունքների խաղաղ ընթացքի համար, գոնէ, ներկայ ուսումնական տարվայ առաջին կիսամեակի ընթացքում: Պրոֆեսորների խորհրդի և ուսանողների խորհրդի մէջ դեռ ևս պարապմունքների սկզբում ծագած թեթև կօնֆլիկտը վերացնելուց յետոյ, առաջինների և վերջինների միջև ամենալաւ յարաբերութիւններ սկսվեցին և որևէ անտագօնիզմի մասին խօսք անգամ լինել չէր կարող: Փոխադարձ վստահութիւնը թէ մէկ և թէ միւս կողմից, կատարեալ էր: Ուսանողները չէին դուրս գալիս այն շրջանակից, որի մէջ նրանք դրված էին պրոֆեսորների խորհրդի կողմից մշակված կանոնադրութեամբ: Բոլոր ժողովները գումարվում էին իմ գիտութեամբ և դասախօսութիւններից ազատ ժամանակ: Ռեֆերատները նոյնպէս տեղի էին ունենում իմ թոյլտուութեամբ և միանգամայն գիտական բնաւորութիւն էին կրում: Այսպէս, օրինակ, երկու ռեֆերատները, որ նշանակված էին սեպտեմբերի 29-ին և որոնք արգելվել էին քաղաքապետի կողմից, հետևեալ հարցերին էին նուիրված. 1, տեխնիկական վշտի փիլիսոփայութիւնը և 2, անարխիզմի քննադատութիւնը:

—Հետևապէս էլ ինչո՞վ էր պատճառաբանում ադմինիստրացիան իր միջամտութիւնը,—հարցրեց թղթակիցը:

—Մեզ յայտնեցին, որ ժողովներում և ռեֆերատներում ուսանողները յեղափոխական ճառեր են արտասանում, յեղափոխական պրօպագանդա են վարում, մշակում են յեղափոխական բնաւորութիւն ունեցող հարցեր: Իսկ գլ շարժառիթը, որ դրդել է ադմինիստրացիային արգելել ուսանողական ժողովները, այն էր, որ համալսարանի պատերի մէջ, ոստիկանական տեղեկութիւններով, ուսանողական ժողովների անունով տեղի էին ունենում յեղափոխական կօմիտէտների անդամների ժողովները: Պրոֆեսորների խորհրդին յայտնեցին, որ եթէ այսուհետև էլ վերոյիշեալ բաները շարունակվելու լինեն, նա կարող է պատաս ենթարկվել արտակարգ պահպանութեան համար սահմանված օրէնքի հիման վրա: Այդպիսի պայմաններում պարապմունքները շարունակել արդէն, պարզ է, անհնարին էր: Համաձայնվեցէք, որ համալսարանի մէջ կատարվող բոլոր բաները իմանալ անկարելի է, իսկ ոստիկանական պարտականութիւնները պրոֆեսորների համար միանգամայն անընդունելի էլ են:

—Ապա ուրեմն, այդ էլ ծառայել է պարապմունքները ընդհատելու ամենամեծ շարժառիթը:

—Ոչ, քաղաքապետը յայտնեց, որ նա չի թոյլ տայ, որպէսզի փողոցում հաւաքվողները ենթարկվեն ոստիկանութեան բարձր պա ուսանողները, որը, ինչպէս նա տեղեկացել է, սեպտեմբերի 30-ին տեղի է ունեցել համալսարանի զարբասի մօտ այն ժամանակ, երբ ուսանողները իրանց տներն էին ցրվում, և ինչ որ խուլիգաններ թոյլ են տուել իրանց հայհոյելու ոստիկանութեանը: Որպէսզի այդ բանը չը կրկնվի ապագայում ևս, նա վճռեց համալսարանի մօտ ուղարկել հեծելազօրքի զօրախմբեր: Իրերի ներկայ դրութեան մէջ զարմանալի ոչինչ չի լինի, եթէ որ մի գեղեցիկ օր ոստիկանութեան և ուսանողների միջև ընդհարում տեղի ունենայ: Հաշուել մի այդպիսի դրութեան հետ մենք անպայման չենք կարող, այդ պատճառով էլ վճռեցինք մինչև ներկայ դրութեան վերջնական պարզվելը համալսարանը փակել:

—Իսկ ինչպէս է ուսանողութեան տրամադրութիւնը:

—Մինչև վերջին ժամանակներս միանգամայն խաղաղ: Ուսանողները շատ ջանասիրութեամբ պարապվում էին, դասախօսութիւններին յաճախում էին այնպիսի քանակութեամբ, որի նմանը երբեք չէր եղել: Լաբորատորիաները նոյնպէս բոլորն էլ լցված էին: Քննութիւնների համար, որոնք պէտք է ըսկսվէին մօտ օրերումս, մեծ բազմութիւն էր գրվել: Մի խօսքով հանգիստ ու խաղաղ էին անցնում պարապմունքները: Ուսանողների համար այնքան էին անսպասելի ոստիկանութեան կողմից գործադրվող բռնութիւնները, որ երբ մենք սեպտեմբերի 29-ին գնացինք ժողովները, ուր, պէտք է նկատել, երկու ժողովներին ներկայ եղողների թիւը միասին առած 80 հոգուց աւելի չէր, և յայտնեցինք, որ ժողովները քաղաքապետի կողմից արգելված են, ներկայ եղողները ապշած մնացին միայն և իսկոյն էլ բոլորովին խաղաղ դուրս եկան ու ցրվեցին: Այժմ տրամադրութիւնը մի փոքր գրգռված է և առայժմ ուսանողութիւնը սպասողական դիրք է բռնել:

—Ի՞նչպիսի տպաւորութիւն առաջաց դուք ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հետ ունեցած խօսակցութիւնից:

—Միանգամայն նպաստաւոր: Նրա կողմից մենք կը հանդիպենք միայն աջակցութեան: Իսկ որքան ինձ աջողվեց ծանօթանալ Պետերբուրգի ադմինիստրացիայի տրամադրութեան ու վերաբերմունքի հետ այստեղի համալսարանի նկատմամբ, ես կարծում եմ, որ մեր գեներալ-նահանգապետը գործել է ինքնագլուխ և իր պատասխանատւութեամբ, այդ պատճառով յոյս ունեմ Ստոլիպինի կողմից ես, որի մօտ մենք գնալու ենք այսօր, համակրութեան հանդիպելու: Բայց եթէ մեր գնալը ապարդիւն անցնելու լինի, այն ժամանակ ես և իմ օգնականը անմիջապէս հրաժարական կը տանք:

ՀՈԿՏ. 17-Ի ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Այժմ, երբ Պետական Դումայի ընտրութիւնները մօտ են և քաղաքական կուսակցութիւնները պատրաստվում են ընտրական պայքար մղել, հետաքրքրական է ծանօթանալ աչքի ընկնող կուսակցութիւնների նոր ծրագիրների հետ: Այդ նպատակով, և որովհետև հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան ծրագրի մէջ փոփոխութիւններ են մտել, աւելորդ չենք համարում առաջ բերել այդ դաշնակցութեան Պետերբուրգի և Մոսկվայի կենտրոնական կոմիտէների վերջնականապէս խմբագրված որոշումը՝ քաղելով «Товарищъ» թերթից:

«Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան կենտրոնական միացեալ կոմիտէտը քննելով դաշնակցութեան Մոսկվայի կենտրոնական կոմիտէի նախկին նախագահ և դաշնակցութեան հիմնադիրներից մէկի՝ Դ. Ն. Շիպօվի յայտարարութիւնը, դաշնակցութեան կազմից իր դուրս գնալու մասին,—իր պարտքն է համարում յայտնել այդ առիթով հետեւեալը.

Հոկտեմբերի 17-ի դաշնակցութիւնը, ինչպէս բոլորովին ճիշտ նկատում է Դ. Ն. Շիպօվը, միշտ իր գլխաւոր նպատակն է դրել, աջակցել մեր պետական կազմի խաղաղ վերակազմութեան—1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստով ընդգծած սահմանադրական սկզբունքների հաստատուն հիմունքներով: Իր այդ գլխաւոր նպատակին դաշնակցութիւնը մնացել է անյողդողդ հաւատարիմ և կը մնայ սրանից յետոյ էլ: Նրա՝ թէ անցեալ և թէ ներկայ գործունէութեան ընթացքում չը կայ յետ կասման մի բան այդ հիմնական նպատակից, և ոչ մի բան չէ հակասում նրա գործունէութեան և Մոսկվայի կենտրոնական կոմիտէի ներկայ նախագահ Ա. Գուչկովի վերջերս հրատարակած գրութիւններին: Նոյն այդ արմատական խնդրին հետևելու է դաշնակցութիւնը ապագայում հաստատապէս:

Ուստի, եթէ այժմ դաշնակցութեան ուղղութեան և Դ. Ն. Շիպօվի քաղաքական հայեացքների միջև գոյութիւն ունի որևէ տարաձայնութիւն, այդ փոփոխութիւնը չէ եղել երբեք դաշնակցութեան կողմից: Կենտրոնական կոմիտէտը առանձնապէս անհրաժեշտ է համարում հէնց այժմ և եթ ընդգծել իր հիմնական համոզմունքի անսասան կայութիւնը, ի նկատ առնելով սոսկ յիշատակված հանգամանքները:

Մի կողմից սահմանադրա-ռամկավար կուսակցութիւնը—յանձին Պետական Դումայում ունեցած և նրա մէջ ղեկավարիչ նշանակութիւն ունեցող շատ ներկայացուցիչների—սկզբում հրաժարվեց դատապարտել համատարած սպանութիւնները, ջարդերը և այլ բռնութիւնները, յետոյ մասնակցեց այն կոչին, որ հրաւիրում էր ազգաբնակութիւնը հակապետական պայքարին գործողութիւնների, որոնց հոկտ. 17-ի դաշնակցութիւնը հանդիսանում է մէկը—սահմանադիր հողի վրա կանգնած, համայն Ռուսաստանում միակ ընդարձակօրէն կազմակերպված քաղաքական կուսակցութիւնների, իսկ միւս կողմից—ներկայ կառավարութիւնը ձեռնամուխ է եղել վճռականապէս ճնշելու անիշխանականութիւնը և յեղափոխական հողի վրա տարածվող աւազակութիւնը, կանգ չառնելով այնպիսի ծայրահեղ միջոցների առաջ, որպիսին է, օրինակ, վերջերս հրատարակված օրէնքը՝ պատերազմական-դաշտային դատարանների մասին: Հոկտ. 17-ի դաշնակցութիւնը գտնում է, որ պետութեան կանոնաւոր զարգացման անհրաժեշտ պայմանը՝ խաղաղութիւնը և հանգստութիւնն են հանդիսանում, և որ կառավարութիւնը պարտաւոր է ապահովել նրանց նպատակայարմար բոլոր միջոցներով: Ընդունելով, որ իր անդամներից մի քանիսը կարող են այս կամ այն գնահատութիւնը տալ վերոյիշեալ նպատակի համար, կառավարութեան ձեռք առած միջոցներին, դաշնակցութիւնը իր ամբողջութեամբ գտնում է, որ ծանր և դժուարին անհրաժեշտութիւնը կարող է ստիպել բացառիկ դէպքերում դիմել խիստ և յանկուան միջոցների, բայց այդ միջոցները պիտի ճշտօրէն սահմանափակվեն իրանց գործադրութեամբ և դրված լինեն արդարադատութեան բոլոր երաշխաւորութիւններով, ինչպէս և լինելու են անվտանգ խաղաղ բնակիչների համար և չը պէտք է գործադրվեն խստութեան այնպիսի չափերով, որոնք գրգռում են բարոյական զգացմունքը և խախտում են ազգաբնակութեան լայն խաւերի՝ առ պետական իշխանութիւնն ունեցած հաւատը և վստահութիւնը: Բայց դաշնակցութիւնը պնդում է, որ կառավարութեան՝ յեղափոխական շարժման դէմ ներկայումս ձեռնարկած կռուի և ոչ մի միջոցը անկարող է հաստատ խաղաղութիւն տալ մեր հայրենիքին, առանց նրա մէջ սահմանադրական կազմ արմատացնելու և դեմօկրատական բարենորոգութիւնների մի շարք սիստեմներ մտցնելու:

Դ. Ն. Շիպօվի յայտարարութեան մէջ կարելի է տեսնել, թէև ոչ ուղղակի արտայայտված մի կշտամբանք, որ իբր հոկտ. 17-ի դաշնակցութիւնը իր գլխաւոր խնդիրը փոխարինել է մի ուրիշ նպատակով, այսինքն, աջակցութիւն ցոյց տալ Պ. Ա. Ստոլիպինի մինիստրութեան, նրա հետևած քաղաքականութեան մէջ և նոյն իսկ լիովին համախոհ է մինիստրութեան հետ: Թէև այս ենթադրութիւնը բացարձակօրէն հակառակ է իրականութեան, բայց և այնպէս կենտրոնական կոմիտէտը օգտվում է ներկայ դէպք, որպէսզի հակիրճ արտայայտէ իր կարծիքը հարցի էութեան և իր՝ դէպի կառավարութիւնն բռնելիք վերաբերմունքի մասին:

Կենտրոնական կոմիտէն կարծում է, թէ հոկտ. 17-ի դաշնակցութիւնը, իբրև սահմանադրական անկախ մի կուսակցութիւն, կարող է իրան նպատակ դնել ցոյց տալ ընդհանուր պաշտպանութիւն ու աջակցութիւն սոսկ այնպիսի մինիստրութեան, որպիսին կանգնած կը լինի դաշնակցութեան ծրագրի հիմնական սկզբունքների ուղիղ վրա: Այդօրինակ պայմաններ ներկայ դէպքում դաշնակցութիւնը չէ տեսնում, որով և իրան է վերապահում լիակատար ազատութիւն՝ դրական կամ բացասական վերաբերվել կառավարչական առանձնակի գործողութիւններին, մնալով կրկին օտար, ինչպէս ներկայ կաբինէտին աջակցութիւն ցոյց տալու ձգտման, այնպէս և կանխակալ՝ օպպօզիցիային: Միևնոյն ժամանակ, հէնց իր սահմանադրականութեան ոյժով, 17-ի դաշնակցութիւնը անկարող է հակվել դէպի այն խիստ հալածանքը, որ յարուցած է կառավարչական իշխանութեան դէմ ծայրահեղ կուսակցութիւնների կողմից ներկայումս, մինչև ժողովրդական ներկայացուցչութեան առաջիկայ նոր գումարումը, երբ քաղաքական դրութիւնը ոչ մի յոյս չէ տալիս, թէ գոյութիւն ունեցող բիւրոկրատիկ կաբինէտը կարող է փոխարինվել լիբերալ անկախ գործիչներից բաղկացած մինիստրութեամբ:

Բիւրոկրատական մինիստրութեան դէմ մղվող յամառ ագիտացիան հետամուտ չէ և ոչ մի խելացի նպատակի. նա բնական է աներևոյթ և երևոյթական յեղափոխականների կողմից, որոնք օգտվում են ամեն մի դէպքից և որոնում են ամեն տեսակ միջոցներ քանդելու և վերացնելու միապետական կազմի հիմունքները, ինչքն պետականութիւնը, որպէս ցի նպատակն՝ աւելի ընդարձակ չափերով, մեր տանջված և լքեալ հայրենիքում եղած փոխադարձ ատելութեան բռնկման և բորբոքման...: Անխտիր և կատաղի յարձակումները կառավարութեան վրա՝ կարող են հեռու տանել դրած նպատակը,—նրանք կարող են ժողովրդական գիտակցութեան մէջ երերել պետական սկզբունքը և դրանով թուլացնել ապագայ ամեն տեսակի իշխանութիւն, և, այդպիսով, անիշխանականութեան ձեռքին գործիք դառնալով, կարող է պատահել, որ երկար ժամանակով կանգ կառնէ Ռուսաստանի սահմանադրական զարգացումը: Սահմանադրական միապետութեան անկեղծ կողմնակիցները պէտք է ձգտեն ըստ կարելւոյն հանդարտեցնել քաղաքական կրքերը, որպէս մի ցանկալի պայման—պետութեան խաղաղ և հաստատ վերակազմութեան: Հրաւիրելով դաշնակցութիւնը բարեկարգման աշխատանքի, յօգուտ մեր հայրենիքի խաղաղութեան և առաջադիմութեան, կենտրոնական կոմիտէտը մնում է իր նախկին խորագոյն համոզման մէջ, թէ երկրի՝ ներկայ յուզալից դրութիւնից ելնելու միակ յուսալի միջոցը հանդիսանում է այն, որ ընտրվի ժողովրդական մի այնպիսի ներկայացուցչութիւն, որը ոչ միայն կամենայ, այլ և կարողանայ Ռուսաստանը դնել սահմանադրական կազմի և քաղաքացիական ազատութեան զարգացման ճանապարհի վրա»...

ԿԵՂԾ ՆԱՄԱԿՆԵՐ ԴՋԼԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին

Պահակներն արդէն կազմված են և կանոնաւոր հսկում են թէ շրջակայքում և թէ քաղաքում: Սրանց աջողվեց բռնել 2 աբրեկի, որոնցից մէկը յայտնի Իբայ լենօկանն է. տեսնենք արժանի պատիժ կը ստանա՞յ, թէ ոչ:

Անապահովութիւնը մեծ վտանգութիւն է տուել բոլոր շանտաժիստներին. ամեն մի քայլափոխում աբրեկների անուան տակ կեղծիքներ է, որ կատարվում են... Ունևորները շարունակ նամակներ են ստանում, որով փող են պահանջում. Նրանց այդ բոլոր նամակները համարեա հետևեալ բովանդակութեամբ են գրված:—Նախ՝ երկիւղ ազդելու համար, յիշեցնում են միքանի սպանվածների ու գերվածների, որոնց դժբաղդութեան դրանք էլ կարող են ենթարկվել. ապա կարուկ կերպով պահանջում են, այս ինչ տեղը՝ ծառի տակ, կամուրջի ծայրին և կամ թէ չէ հողի մէջ դնել 1,000, 2000 և այլն րուբլի: Խիստ արգելում են, որ այդ դիմումի մասին որևէ մէկին չասեն. ամենաշատը մի շաբաթ ժամանակամիջոց են տալիս այդ հրամանը կատարելու: Հակառակ վարվողին սպառնում են սոսկալի և երբեմն խայտառակ մահ...

Այդպիսի նամակներ են ստացել անցեալ օրը և Խ. քահ. Ա., վաճառականներ՝ Շերմենը և Գ. Ա.-ն:

Նամակ գրողները աշխատում են, որ իրանց նամակները մի որևէ աչքի ընկնող աբրեկի անունից լինի, որպէսզի, ի հարկէ, հետևանքի հասնեն. վերոյիշեալ անձնաւորութիւնների ստացած նամակների տակ ստորագրված է «Զալիմ-խանի ընկերներ»: Վերջինս ամբողջ Դաղստանում յայտնի է, որպէս նշանաւոր աւազակապետ. եղել է բէկական դպրոցի աշակերտ, ինչպէս ասում են, օֆիցերի աստիճան է ստացել և ապա թողնելով զինուորութիւնը, աւազակների հրամանատար է դարձել. մի քանի անգամ բռնված է և ազատված. Սիբիր ևս եղել է: Սրիկաները անամօթ կերպով շահագործում են աբրեկների անունները և փորձում են փողը կորզել հարուստներից:

Ամօթ է. կարիք չը կայ առանց այն էլ անհանգիստ ու պղտորված կեանքը անտանելի դարձնել: Բոլորին քստմնեցնում ու զզվեցնում են անմիտ խուլիգանական կոտորածներն ու բռնութիւնները. բոլորի աչքից արիւն է հոսում, երբ տեսնում կամ լսում են մեր եղբայրների, քոյրերի աննպատակ մահը... Այո, բոլորը խուլշում են մեր կեանքի աննորմալ ընթացքից և բողոքում ամեն մի անպատիւ վարմունքի, ամեն մի ճնշման և բռնութեան դէմ. բայց, ցաւօք սրտի, շատերը հէնց իրանք ստեղծում են այդպիսի կացութիւն և աններելի բռնութիւններ... Ապրելու ինչպիսի՜ անմաքուր ճանապարհ...Հերիք է, թողէք, ամօթ է...

Վ. Սաղանդարեան

ԱՆԴՐԷԵՎԻ «ՍԱՎՎԱՆ» ԵՒ ԱՆԱՐԽԻԶՄԸ

(Նամակ Պետերբուրգից)

Համալսարանը բացվեց յեղափ. կազմակերպութիւնների որոշմամբ,—և ուսանողութիւնը նորէն իր նոյն կեանքով լցրեց մայրաքաղաքը: Օր չէ անցնում, որ բարձրագոյն դըպրոցներից որևէ մէկում ժողով չը լինի: Քննվում են ժամանակակից բոլոր հրատապ հարցերը, խօսվում են և ագրարային խնդրի, և մարքսիզմի և այլ շատ հարցերի մասին: Մենք կաշխատենք այս նամակում ընդհանուր կերպով ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին այդ ժողովներից մէկում կարդացված մի հետաքրքիր րէֆէրատի հետ:

Րէֆէրէնտը մեծամասնական նշանաւոր ս.-դ.-երից էր—Կանաչարսկի, որ իր րէֆէրատը անուանել էր Անդրէևի «Սավվայի» և անարխիզմի մասին ընդհանրապէս: «Սավվան» Անդրէևի վերջին գեղարուեստական երկերից մէկն է, որ նա երևան է հանում մի անարխիստի և ռուս ժողովրդի տարբեր խաւերի ներկայացուցիչներին: Րէֆէրատի սկզբում արդէն Կանաչարսկին շեշտեց, որ «Սավվայի» մասին նա շատ քիչ է խօսելու, և նրա վրա կանգ է առնելու այնքան, որքան նա կապ ունի իր նիւթի հետ: Եւ դրա համար էլ րէֆերատը բաժանված էր երկու մասի. 1-ն, ուր քննվում էր պիեսան,—և 2-ըը, ուր դասախօսը կանգ առաւ անարխիզմի մի որոշ կողմի վրա:

Առաջին հարցը, որ ինքնըստինքեան տալիս է իրան ամեն մի անարխիզմը քննող անձ, այն է, թէ որո՞նք են այն պատճառները, որոնց շնորհիւ վերջին ժամանակ անարխիզմը զարգացել է մեզ մօտ: Այդ պատճառները պէտք է որոնել նախ և առաջ ռուսական ինտելլիգենցիայի հոգեբանութեան մէջ, որովհետև հասարակական այդ խաւի դրութիւնը անհրաժեշտօրէն մղում է նրան դէպի կռիւ ներկայ հասարակական և քաղաքական կարգերի դէմ: Բայց նրա մղած կռիւը նման չէ բոլորովին պրօլետարական կռուին:

Այն ժամանակ, երբ վերջինը ձգտում է մասսայական, կօլլէկտիւ կռուի միջոցով հասնել իր նպատակներին,—ինտելլիգենտը ընդհակառակը ջղայնօրէն, անհատական գործողութիւնների միջոցով է կամենում իրականացնել իր պահանջները, որովհետև նրան շատ դանդաղ է թւում առաջին ճանապարհը:

Կրկին նրա հոգեբանութեամբ է բացատրվում նաև այն բացասական դիրքը, որ նկատելի է ինտելլիգենտների կողմից սօցիալ-դեմօկրատիայի վերաբերմամբ: Նա երբեք չէ կարող համաձայնվել կուսակցական դիսցիպլինայի անհրաժեշտութեան հետ: Նրա կարծիքով այդ միևնոյն է, թէ բռնաբարել նրա միտքը: Ինդիվիդուալիզմը—ահա էական կողմը ինտելլիգենտական հոգեբանութեան: Եւ իբրև այդպիսին—նա շատ հեշտութեամբ էլ ըմբռնում է անարխիստական գաղափարները:

Միւս կողմից անարխիզմի հետևողների մեծ կոնտինգենտը կազմում են 1) լիւմպէն պրօլետարիատը, 2) անգործ բանւորները, 3) մանր սեփականատէրերը. դրանք այն խաւերն են, որոնք անմիջական զոհերն են ներկայ հասարակական աննորմալ կազմի: Կապիտալիզմը նախ և առաջ դրանց վրա է ընկնում,—ու դրա համար էլ այդ բոլոր խաւերի սրտերն էլ լցված են աննուն ատելութեամբ դէպի այն հասարակութիւնը, որը սառնասիրտ դիտում է նրա թշուառութիւնը: Եւ ահա, որովհետև նա տեսնում է, որ ինչ որ հզօր անողոք ֆէտիշը չէ թողնում նրան օգտվել կեանքի բոլոր հաճոյքներով, նա շշմում է, և առանց փորձելու ըմբռնել հասարակական պայմանները, իր ամբողջ ատելութիւնը ուղղում է իր շրջապատի դէմ: Նա կամենում է աւերել, ոչնչացնել ամեն բան, ինչ որ կրում է կապիտալիստական կազմի բնայատուկ դրոշմը: Նրա սիրտը վրէժ է հայցում: Ամբողջ հասարակական զարգացումը—նրա համար մի անըմբռնելի բան է, դրա համար էլ նա երևակայում է, որ ամեն բան խառնվել է, ինչ որ մարդիկ եկել են խանգարել դրախտային կեանքը նախնիների, բայց ահա նա եկել է և ցոյց է տալիս բոլոր սխալները: Այժմ բաւական է, որ «առողջ մտածող» մարդիկ հետևեն նրան, և ամեն բան կը դրսավի:

Նա ամեն բան քննադատում է իր սեփական, անձնական տեսակէտից,—և այն ամենը, ինչ որ չէ համապատասխանում իր տեսակէտին, նա համարում է տխմարութիւն: Մարդիկ թշուառ են,—Է, այդ նրանց տխմարութիւնից է, այ, եթէ նրանք այնպէս անեն, ինչպէս ես եմ ասում,—օ՜, այն ժամանակ լաւ կը լինի:

Այդպէս չէ դատում մարքսիստը: Նա աշխատում է խոր ըմբռնել հասարակութեան ընթացքը և տեսնում է, որ բոլոր իր շուրջի նոր երևոյթները անհրաժեշտօրէն զարգացել են հին պայմաններից և որ հէնց այդ նորը իր մէջ կրում է ապագայ, նորմալ պայմանների էլէմենտներ: Բայց այդ մասին քիչ յետոյ:

Անդրէևի «Սավվա»-ին չէ կարելի ի հարկէ դասել ժամանակակից անարխիստների շարքը, բայց յամենայն դէպս, նրա մօտ մենք կը գտնենք ընդհանուր, էական կողմեր, որ աւելի ևս պարզվում են նրա գործողութիւնների քննութիւնից: «Սավվա»-ի մօտ կը գտնենք 3 բնորոշ կողմեր: Նախ, այդ նրա բացասական դիրքն է դէպի քաղաքակրթութիւնը, գեղարուեստը,—այդ բոլորը նրա տեսակէտից անմիտ, տխմար բան է: Մարդկային տխմարութիւնն է դրա պատճառը: 2-րդ էական կողմը—այդ նրանց նիհիլիստական սկեպտիցիզմն է,—կայ մի անողոք Աստուած, այդ բանականութիւնն է, որ պահանջում է բոլորի հպատակութիւնը: Այդ մեծ, ռացիօնալիստական գաղափարը մեծ տեղ է գրաւում անարխիստների աշխարհայեցողութեան մէջ:

Հարկաւոր է քանդել, ոչնչացնել բոլոր շըրջապատը, և յետոյ արդէն, երբ ամբողջ հինը քանդվի, սկսել շինել նորը: Մենք արդէն վերը շեշտեցինք այն էական պատճառները, որ դրդում են ժամանակակից հասարակութեան որոշ խաւերը ընկնել անարխիզմի գիրկը: Մանր արհեստաւորը, որի սեփականութիւնը ձեռքից գնում է, մի բան է միայն տեսնում, այն, որ նա կորչում է,—այդտեղ նրա մտածողութիւնը, միտքը արդէն երկրորդ տեղն է քաշվում և առաջին տեղը գրաւում է զգայնականութիւնը:

Մարքսիստը, մենք արդէն վերը կանգ առանք դրա վրա, խուսափում է այդ ճանապարհից, և միւս կողմից նա երբեք իրան «առողջ մտածող» անհատ չէ դատում: Նրա հայեցակէտով ամեն բան հասարակութեան մէջ կատարվում է որոշ օրէնքների հիման վրա, և ախը անելու, տնքտնքալու տեղ հարկաւոր է միայն քննել իրականութիւնը այնպէս, ինչպէս որ նա կայ և ապա համեմատ պարզած պայմանների էլ գործել:

Յեղափոխական ռացիօնալիզմը, իբրև ելակէտ ընդունում է «առողջ մտածող անհատին», որ բացասում է ամեն բան, և տեղը դնում իր անձնական տեսակէտին համապատասխանողը: Գիտական սօցիալիզմը—արտացոլում է իրականութիւնը, նոր աշխարհը—սօցիալիզմը կապիտալիզմից յետոյ:

Մենք բաց ենք թողնում րէֆէրէնտի տուած բացատրութիւնները էվօլիւցիօնիզմի վերաբերեալ, որովհետև դա նիւթին քիչ է վերաբերում և վերջապէս մեծացնում է նամակը, որ առանց այն էլ լայնացաւ: Կանգ առնենք կրօնի վրա, որ այնքան հզօր ազդեցութիւն ունի ներկայ հասարակութեան աշխատաւոր խաւերի վրա: Լ. Անդրէևի «Սավվան» փորձում է ցրել ժողովրդի նախապաշարմունքները, նրա կրօնականութիւնը,—օդը ցնդեցնելով մի սուրբի պատկերը, որին «երկրպագելու» համար իւրաքանչիւր տարի հաւաքվում էին շրջականերից բնակիչները: Ահա այդ ժամանակ ժողովուրդը Սավվայի կարծիքով կը տեսնէ, որ դինամիտը աւելի ուժեղ է, քան նրանց Աստուածը և այդպիսով նրանց հաւատն էլ կը թուլանայ: Փորձը չէ աջողվում. պատկերը աբեղաները թաքցնում են մի ապահով տեղ և յետոյ աւերակների միջից հանելով դուրս բերում ժողովրդի մօտ, որպէս զի ցոյց տան, որ սուրբը ազատ է մնացել վտանգից: Ժողովրդի հաւատը այստեղ ի հարկէ մեծանում է: Բայց այժմ հարց է ծագում. միթէ եթէ պատկերը կորսվէր, ժողովրդի հաւատը կը կորչէր, կը չքանար: Երբեք: Ժողովուրդը այդ դէպքում մի ուրիշ սուրբ կը ստեղծէր, կը սրբացնէր վերջապէս պատկերի մնացած մասնիկները: Ինչո՞ւ: Որովհետև նրա հաւատի արմատները աւելի խոր պայմաններում էին գտնվում,—նրա կրօնասիրութիւնը, նրա հաւատը անմիջական արդիւնքը, պրօդուկտն էր այն սօցիալ-տնտեսական պայմանների, որի մէջ ապրում էր նա: Մինչև որ կայուն է շուկան,—մարդիկ անհրաժեշտօրէն կըֆէտիշացնեն և կրօնական մտածողութիւն կունենան: Իսկ աւելի ևս վերաբերվում է այդ ռուս գիւղացուն, որի առաջ, բացի շուկայից, ապրանքից, հասարակութիւնից իր անըմբռնելի բնա-անհրաժեշտական օրէնքներով, կանգնած է անողոք բնութիւնը իր հզօր արհաւիրքներով, որոնց դէմ կռուել նա անկարող է, որանց ըմբռնել նա չէ կարող: Այդ դէպքում նա անհրաժեշտօրէն պէտք է ֆէտիշացնէր բնութիւնը:

Քանի որ գոյութիւն ունեն յիշուած պայմանները, գոյութիւն կունենայ և այդ կրօնասիրութիւնը. առանց պայմանները փոփոխելու անկարելի է նրանց կրօնականներից դարձնել մատերիալիստ և այլն:

Բոլորովին ուրիշ է պրօլետարիատի շրջապատը, նրա կենսական պայմանները,—ամեն բան նրա առաջ պարզ է, կապիտալիստական արդիւնաբերութիւնը իր մեքենայական պրօցէսով և կապիտալիզմը իր հակասական կողմերով: Նա զգում է իրան մի կօլլէկտիւ անհատ, որի դէմ կանգնած է կապիտալիստ հասարակութիւնը: Այդպիսի պայմաններում նա այլ ևս չէ ֆէտիշացնում շուկան, և այդ նրա դրութիւնը արդէն նպաստաւոր պայմաններ է ստեղծում գիտական-փիլիսոփայական գաղափարների տարածման համար:

Վերջապէս րէֆէրէնտը բաւական երկար կանգ առաւ այսպէս կոչված յեղափոխական սինդիկալիստական շարժման վրա, որպէս զի դրանով քննի նաև անարխիստների հայեցակէտը պետութեան վերաբերմամբ և պարզէ մի քանի այլ կողմեր, որոնք յաճախ խեղաթիւրվում են անարխիստների կողմից:

Սինդիկալիստները, ինչպէս յայտնի է, մեղադրում են մարքսիստներին պարլամենտական կրէտինիզմի մէջ, միւս կողմից մարքսիստները, նրանց կարծիքով, ապագայ սօցիալիզմում կամենում են ստեղծել կառավարութիւն, նոյն ֆունկցիաներով, որպէս ներկայումս: Նախ քան քննելը այդ կէտերը, կանգ առաւ այն պայմանների վրա, որոնց մէջ զարգացաւ սինդիկալիստական շարժումը Արևմտեան Եւրոպայում: Նրա կարծիքով որոշ չափով դրան նպաստեց այսպէս կոչված րէֆօրմիզմի տարածումը: Սօցիալիստ գործիչների մի որոշ մասը կարծում էր, թէ գտնվել է մի նոր, «աւելի լաւ» միջոց սօցիալիզմը իրագործելու համար: Այդ պարլամենտական խաղաղ գործունէութիւնն է: Ի՞նչ յեղափոխութիւն, ի՞նչ պրօլետարիատի դիկտատուրա—այդ բոլորը դօգմաներ են: Բաւական է միայն լաւ գործել պարլամենտում, բարելաւել օրէնսդրական այդ խաղաղ միջոցներով պրօլետարիատի դրութիւնը, տարածել սօցիալիստական գաղափարները և ապա, երբ սօցիալիստները կը կազմեն հասարակութեան մէջ մեծամասնութիւն,—պարզ է, որ ոչինչ չարժէ ստեղծել «երկնային դրախտը»:

Րէֆէրէնտը կանգ առնելով մի փոքր դրա քննութեան վրա շեշտեց, որ այդ պարօնները աչքից բաց էին թողնում այն հանգամանքը, որ ամեն բան կախված է հասարակական ոյժերի յարաբերութիւնից: Պարլամենտական դէպուտատները ուժեղ են այնքան, որքան իրանք յենվում են մի այնպիսի կազմակերպութեան վրա, որը հարկաւոր դէպքում կարող կը լինի պաշտպանել իր դաւանանքները: Բուրժուազիան չէ կերակրվում ցնորքներով, նա կողմնակից է պարլամենտիզմի այնքան, որքան նա նպաստում է նրա շահերին, բայց այն ժամանակ, երբ նա չը կորցնէ իր գերակշռող դիրքը պարլամենտում, երբ պարլամենտը այլևս կը դադարէ նրա դասակարգային զէնք լինելուց, այն ժամանակ բուրժուազիան կը քշէ իր թշնամուն այդ դիրքից, և այդ ժամանակ voleus noleus վճռական ձայնը պէտք է ասէ՝ ելիր փողոցը: Րէֆօրմիզմը այժմ ի հարկէ կորցրել է իր «հմայքը» սօցիալիստ. շրջաններում, բայց նրա կարճ գոյութիւնը վատ ազդեցութիւն ունեցաւ բանւորական շարժման վրա և այդ հետևանքներից մէկն էր և սինդիկալիզմի զարգացումը: Փայտը ծռեցին միւս կողմը: Սօցիալ-դեմօկրատիայի դիրքը այդտեղ պարզ է. նա չը պէտք է ոչ դրուատէր պարլամենտիզմը, ոչ էլ ժխտէր, նա պէտք է օգտվէր պարլամենտից այնքան, որքան նա նպաստում էր բանւորութեան կազմակերպման գործին:

Նորից կրկնում եմ,—ստիպված եմ շատ բան համառօտ ասել, շատ բան էլ բաց թողնել,—Կանաչարսկու րէֆէրատը այնքան մեծ է, որ մի նամակով անկարելի է տալ մանրամասն տեսութիւնը նրա, բայց յամենայն դէպս մենք կանգ ենք առնում էական կողմերի վրա:

Թողնելով պրօֆէսիօնալ միութիւնների վերաբերեալ արտայայտածը, մենք կարճ լինելու համար, ուղիղ անցնում ենք այժմ պետութեան հարցին: Անարխիստները և սինդիկալիստները դիտաւորութեամբ խեղաթիւրելով մարքսիզմը, պնդում են, որ սօց.-դեմօկ. ինչ որ կառավարութիւն են կամենում ստեղծել «ապագայ աշխարհում»: Այդպիսի բան չը կայ: Դեռ գիտական սօցիալիզմի նախահայրերից մէկը, Ֆրիդր. Էնգէլսը շեշտել է, որ պետութեան մասին սօցիալիստ, հասարակութեան մասին խօսք էլ չէ կարող լինել. պետութիւնը—դա դասակարգային տիրապետութեան զէնք է, և ոչ դասակարգ, հասարակութեան մէջ անհրաժեշտութիւն էլ չը կայ այդպիսի կառավարութեան: Բայց միւս կողմից սօց.-դեմօկ. շեշտում են, որ «ազատ խմբակցութ. ազատ հասարակութեան մէջ» գաղափարը մի յետադիմական գաղափար է, որովհետև այդպիսով այդ նոյն առանձին խմբակցութիւնների մէջ նորից կը սկսվէ տնտեսական կռիւը, կօնկուրենցիան: Մի խօսքով կը սկսվի նորից հին պատմութիւնը: Ահա դրա համար անհրաժեշտ է, որ լինի մի կենտրոնացած կազմակերպութիւն, որի ձեռքին լինէր տնտեսական կեանքի կանոնաւորումը, բաշխման և այլ հարցերը:

Անարխիստները—սինդ. դրա դէմ բողոքում են, և բողոքելով մի հետաքրքիր բան էլ են յայտնում: Այդ այն է, թէ որպէ՞ս իրագործել հասարակութեան հաւասարութեան գաղափարը: Օ, դրա համար հարկաւոր չէ երկար սպասել, մինչև որ արդիւնաբերութեան բոլոր ճիւղերը պատրաստ լինեն. ինչո՞ւ երկար սպասել, թող առանձին սինդիկատները այնտեղ, որտեղ հնարաւոր է, հէնց այժմեանից իրանց ձեռքը վերցնեն գործարանը: Այդպիսով սինդիկալիստները ձգտում են նոր կօօպերացիաներ ստեղծել, իսկ այդ կօօպերացիաների վիճակը բուրժուական հասարակութեան մէջ արդէն բաւականաչափ յայտնի է: Բելգիայում, կօօպերատիւների այդ տիպիքական երկրում, կաթնէ սինդիկատներում այժմ վարձու բանւորները արդէն շատ աւելի են, քան բաժնետէրերը:

Այդպիսով այստեղ արդէն սինդիկալիզմը պարզ երևան է հանում իր մանր բուրժուական կերպարանքը, և այդպէս միւս կէտերում: Րէֆէրէնտը վերջացնելով իր դասախօսութիւնը, մի անգամ ևս շեշտեց մանր բուրժուազիայի հոգեբանութեան էական կողմի վրա — նրա բուրժուական ինդիվիդուալիզմը: Մանր սեփականատէրը միշտ ամեն բան չափում է իր «եսի» տեսակէտից. նա չէ կարող մտածել կօլլէկտիւօրէն,—այն ինչ պրօլետարիատի մօտ ընդհակառակը: Պրօլետարիատի հոգեբանութիւնը—կօլլէկտիւիստական է, որովհետև իր շահերը նա կապում է ընդհանուրի հետ, և որովհետև «անձնական գործը նրա մօտ վերածվում է կօլլէկտիւ գործի»:

Արտաշէս Տիգրանեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Բարսում գիւղ, (Թանձ. գաւ) սեպտեմբերի 20-ին.

Ամսիս 15-ից սկսած սիրողների մի համակրելի խումբ, բաղկացած Գետաբէկի գործարանի արհեստաւորներից՝ շրջակայ Զարդախլու, Զագիր, Գանձակեր և Բարսում գիւղերում տուին մի շարք ժողովրդական ներկայացումներ: Յանձին պ. Ա. Թաւաքալեանի, որ գործի նախաձեռնողն է և միանգամայն արժանի մեծ խրախուսանքի և մեր անկեղծ շնորհակալութեան, գործն անցաւ շատ աջող: Շնորհիւ պ. Թաւաքալեանի և խմբի յիշեալ գիւղերը առաջին անգամ բաղդ են ունենում տեսնելու և որ գլխաւորն է գաղափար կազմելու ժողովրդական թատրոնի մասին, թատրոնի, որ անծանօթ գաղափար լինելով՝ բացատրվում ու հասկացվում էր «ցիրկ» և «օյինբազութիւն» բառերի անուան տակ:

Չը նայած գիւղացու այն մեծ անտարբերութեան ու սառնութեան, որ գործի սկզբում երևան էր գալիս՝ միշտ և ամեն տեղ էլ ներկայացումները մեծ աջողութեամբ էին պսակվում, քան խսկապէս սպասում էինք: Ներկայացրին «Խաւարից լոյսին», «Սուտ ճգնաւոր», «Զքնաղ Մարօն» և «Սօնայի նշանդրէքը»: Թողնելով սիրողների առանձին դերերի աջող կամ անաջող ներկայացումը, մենք կը խօսենք միայն ժողովրդի տպաւորութիւնից Բարսում գիւղում: Ներկայացման տեղը որոշեցինք հին եկեղեցին (խափան): Շատերը գոռգոռացին և արգելք էին հանդիսացնում եկեղեցում զանազան անպարկեշտ պատմութիւններ և օյինբազութիւններ անելու, որով եկեղեցին սրբապղծվելու էր... Սակայն մենք մի կերպ համոզեցինք, որ թատրոնն էլ հէնց մի սուրբ գործ է ու շատ նպատակայարմար է եկեղեցում կատարելը: Հանդիսականների մեծ մասը կանանցից և օրիորդներից էր բաղկացած, որոնք սպասածից այն կողմ ուրիշ բան տեսնելով, ուրախ և տխուր պատկերների տպաւորութեան տակ այլափոխվեցին, խնդրելով այս տեսակ ներկայացումներ յաճախակի տալ: Բացականները շատ էին ափսոսում, որ զրկվեցին այդպիսի օգտակար ներկայացումից:

Գիւղում խօսակցութեան նիւթ է դարձել այս կամ այն տիպը. մէկը սուտ ճգնաւորի գլուխն է հոգում, միւսը չքնաղ Մարօին անպատուող մօլլային անիծում, երրորդը Սեփօնին (Խաւար. լուս.) սպանող աւազակների վրա ատամ կրճտեցնում, միւսները Փէշտմալճի քթի վրա ծիծաղում և այլն և այլն:

Ներկայացման աջողութեան նպաստող և գործին աւելի փայլ տուողը եղաւ չարդախլուեցի շնորհալի աշուղ երիտասարդ Ս. Աղաբեկեանցը, իր ներկայութեամբ մեծ բաւականութիւն պատճառելով հանդիսականներին: Նա նուագում ու երգում էր գլխաւորապէս վերջին թուրք-հայկական ընդհարումների ժամանակ կատարված իր յօրինած զանազան էպիզօդներ և արշաւանքներ, այս կամ այն հայ կամ թուրք գիւղի աւերումը, դրուատելով և սրտաճմլիկ երգելով շրջանումս արշաւանքների ընթացքում նահատակված հերոս Բէգլարի և հայդուկ Պետրոսի սխրագործութիւնները, և երգում էր բաւականին դուրեկան ձայնով և զգայմունքով, այնպէս որ, բառ տեղի աջողութեան, կարողանում էր յուզմունք և արտասուք առաջ բերել:

Գովում ենք սրտանց պ. պ. Թաւաքալեանի և Աղաբեկեանի եռանդը.

Յ. Երեցեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բալախանի, հոկտեմբերի 2-ին

Հետևելով Յովհաննեան դպրոցի յարկի տակ կատարվող կամայականութեանը՝ չենք կարող չարտայայտել մեր խորին զզուանքը յիշեալ դպրոցի չորս հոգաբարձուների փաշայական վարմունքի դէմ: Այդ անարժան պարոնները առանց կարծելու ոտնատակ են տալիս ամեն օրինականութիւն, հեռացնելով Լ. Սարգսեանին տեսչական պաշտօնից, դեռ ևս մերժում են միջնորդ դատարանով քննելու իրանց այդ զազրելի վարմունքը՝ ունենալով զէնք իրանց ձեռքին Էջմիածնի ոչինչ չարժող կոնդակները: Բայց չէ՞ որ դուք, մարդուկներ, ի չարն էք գործ դնում ձեզ յանձնված իրաւունքները, չէ՞ որ հայ ազգը չի տանի այդ վիրաւորանքը և ձեր երեսին կը խփի այն ցեխը, որով արատաւորում էք նրան: Մենք իբրև հայ ազգի զաւակներ՝ բարձրացնում ենք մեր արդարացի բողոքը ձեր տգեղ վարմունքի դէմ և յայտնում ենք, որ դուք ձեր ստոր կամայականութեամբ արհամարհում էք ամբողջ հայ ազգը, որ դուք իրաւունք չունեք մատաղ սերնդի կրթական գործը ձեր անձնական կրքերին խաղալիք դարձնելու. ուստի պահանջում ենք անպատճառ յանձնել այդ գործը անկողմնակալ միջնորդ դատարանի, որ միայն կարող է գիտակից հասարակութեան արդար բողոքին բաւարարութիւն տալ:

Ե. Երզնկեան, Ի. Աւանէսեան, Շ. Մանուկեան, Ա. Տէր-Յովսէփեան, Ա. Այվազեան, Գ. Շաւերդեան, Մ. Մկրտչեան, Բ. Յովհաննէսեան, Գ. Կարաբէգեան, Ն. Դաւթեան, Սիմօն Մարկոսեան, Ջ. Կարապետեան, Յակոբ Բալայեան, Ս. Տէր-Ստեփանեան, Ներսէս Յովհաննիսեան, Յ. Պօղոսեան, Ա. Պարկեսեան, Պ. Ջախարբեգեան, Իսահակ Տէր-Գաբրիէլեան, Թէոդորոս Կօսեան, Ն. Օհանեան, Կարապետ Սարգսեան, Մելիք-Սահակեան, Լևոն Սահակեան, Աւետիք Գէորգեան, Գասպարեան, Արամ Պահլաւունի, Խոսրով Անանեան, Տ. Կոզգանեան, Մ. Սարգսեան, Ս. Միրզայեան, Ա. Շահրամանեանց, Հ. Բոյումեան, Նահապետ Դիլանչեան, Մ. Խաչատրեան, Տիգրան Շահինեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նշանակված են Թիֆլիսի զինուորակոչութեան ատեանի անդամներ. նախագահ՝ Վ. Ն. Ջերքեզով, փոխ-նախագահ՝ դումայի ձայնաւոր Մ. Զ. Քանանով, զինուորական վարչութեան կողմից անդամներ՝ փոխ-գնդապետ Աբրամօվը, ոստիկանութեան կողմից 6-րդ քաղաքամասի պրիստաւի օգնական Մօրգանեկին, դումայի կողմից Գ. Լ. Թամամշեվ և բժիշկներ՝ զինուորական Բեզբրգանով և քաղաքային բժիշկ Միխայլով: Ատեանը կը սկսէ իր գործունէութիւնը զինուորակոչութեան համար ամսիս 15-ից:

Հոկտեմբերի լոյս 8-ի գիշերը Միքայէլեան պրօսպէկտի վրա հրացանաձգութիւն է տեղի ունեցել 4 չարագործների և ոստիկանական անդամների միջև հետևեալ պարագաներում: Բորժոմեան փողոցում իր պահակատեղում կանգնած ոստիկանը նկատում է չորս կասկածելի անձերի, որոնք ոստիկանին մօտենալով ուղղվում են դէպի Միքայէլեան պրօսպէկտը: Ոստիկանը սկսում է հետևել նրանց: Անյայտները, նկատելով Վեռցելի հիւրանոցի մօտ մի ուրիշ ոստիկանի, վազում են կառք, որի մէջ նստում են նրանցից երկուսը, իսկ միւս երկուսը սկսում են ընթանալ մայթով: Ոստիկանը կառապանին աղաղակում է «կանգնի՛ր», իբրև պատասխան դրան երկու կողմից կրակ են պարպում: Թռչելով կառքից, չարագործներից երկուսը սկսում են վազել Միքայէլեան պրօսպէկտով, հրացանազարկվելով ոստիկաններից և միաժամանակ կրակ բանալով նրանց վրա, և վերջապէս անյայտանում են Կիրօչնի փողոցում: Իսկ միւս երկուսը, նոյնպէս հետամտնելով ոստիկաններից, սկսում են վազել Կոնիէվսկի փողոցով։ Տրաքոցներին 10 րդ ոստիկանատնից դուրս են վազում ոստիկանութեան անդամները, փամփուշտները հատած երկու չարագործներին աջողվում է բռնել։

—

Մօտ օրերս Թիֆլիսում լոյս կը տեսնէ նոր երգիծաբանական շաբաթաթերթ «Гроза» (Մրրիկ) անունով։

—

Զինուորական-դաշտային դատի են ենթարկված զանազան յանցանքների համար 16 հոգի, նրանց թւում և հոկտեմբերի 7-ին ոստիկանի վրա կրակող Վ. Մայիսուրաձէն և Իս. Գուրջաբիձէն։

—

Նահանգապետը առաջարկել է գաւառապետներին և ոստիկանապետին հասցնել ստատիստիքական յանձնաժողովներին Ախալցխա, Գորի, Սղնախ, Թելաւ և Թիֆլիս քաղաքների ազգաբնակութեան քանակութեան ստոյգ թւերը, բացի այն անձերից որոնք գտնվում են իսկական զինուորական պաշտօնի մէջ։ («Тиф.»)

—

Թիֆլիսում կազմակերպվել է օսեթինների հրատարակչական ընկերութիւն։ Այդ ընկերութեան նպատակն է հրատարակել գրքեր և պարբերական հրատարակութիւններ օսերէն և ուրիշ լեզուներով և այդ ճանապարհով նպաստել լուսաւորութեան զարգացման։

—

Անոնիմ ընկերութիւնը մօտ օրերս մտադիր է ելէքտրաքարշի գիծը անցկացնել Սօլօլակում։

—

Ի. Նասիբեանի և Միքելաձէի արհեստանոցներում գործադուլը դադարել է։ Բանւորների բոլոր պահանջներին բաւարարութիւն է տրված։

—

Բագուի պրովօկատորները չեն վհատվում։ Նրանք օգուտ են քաղում ամենաչնչին առիթից, մեծ ջանքերից յետոյ՝ քաղաքում մի կերպ վերականգնված խաղաղ կեանքը նորից խառնակելու համար։ Վերջին ժամանակներս, ասում է «Баку» լրագիրը, պրովօկացիայի համար հող է ստեղծել դպրոցների ազգայնացման հարցը։ Տգէտ մասսայի մէջ աստղաւոր և անաստղ պրովօկատորները լուրեր են տարածում, որ ռուս զաւակները մնացել են քաղաքային դպրոցներից դուրս շնորհիւ այն հանգամանքի, որ նրանց տեղերը գրաւել են հայերը։ Այդ դեռ բաւական չէ, նրանք ասում են, որ հայերի զաւակներին ընդունելու համար արձակելու են ուրիշ ազգութիւններին պատկանող զաւակներին։ Ինչ աստիճան ստորութեան պէտք է հասած լինեն մարդիկ այդ տեսակ ստայօդ և պրովօկատորական լուրեր տարածելու համար։

—

Բագուից հոկտեմբերի 9-ին գիշերը հեռագրում են «Тифл. Газета» լրագրին հետևեալը, «Բալախանում սպանվել է ինժ. Սնորսկին—«Բագուի Նաւթային ընկերութեան» նաւթահանքերի կառավարիչը»։

—

Հոկտեմբերի 5-ին Բագւում, ցերեկվայ ժամի 12-ին, Կօլիւբակինսկի փողոցի վրա, հայոց եկեղեցական տան մօտ ատրճանակի գնդակի մի հարուածով անյայտ մի անձ վիրաւորել է Ս. Քալաշեանցին քներակից որը Միքայէլեան հիւանդանոց տարվելուն պէս մեռել է։ Այդ առիթով, «Баку» լրագիրը հաղորդում է, որ Հայ Յեղ. Դաշնակցութեան Բագուի քաղաքային կօմիտէն մի թռուցիկ է բաց թողել, որով հերքում է քաղաքի մէջ տարածված պրովօկացիական լուրերը, որ իբր թէ հանգուցեալ Քալաշեանցին սպանել է Դաշնակցութեան անդամներից որևէ մեկը։

—

Բագւում մօտ ժամանակներս բացվելու է «Կրթական լիգայի» բաժանմունք։ Այդ նպատակով Բագուի ուսուցիչները խնդրամատոյց են եղել տեղական իշխանութեանը։

—

Պօստ-հեռագրական պաշտօնեաների դրութիւնը, որի բարելաւման մասին սկսեցին խօսել ընդհանուր գործադուլից յետոյ, աւելի է վատթարացել, քան թէ առաջ էր։ Առաջ գոնէ նրանք կարողանում էին ասել իրանց կարիքների մասին, իսկ այժմ այդ էլ չեն կարողանում։ Բերան բաց անելու ամեն մի փորձի դէպքում վախենում ես, որ մի գուցէ ընկնես «կրամօլնիկների» ցանկի մէջ։ Ստիպված քարշ ես գալիս մի կերպ... որովհետև ապրել է հարկաւոր... երեխաները... ընտանիք,—ասել է «Баку» լրագրին նրանցից մէկը...

—

Շօրապանի կայարանից հեռագրում են, որ հոկտեմբերի 8 ին, երեկոյեան 6 ժ. 15 ր., երբ մարդատար գնացքը մտել է կայարան, կօնդուկտոր Իս. Մգիվանին վայր է ընկել վագօնից և կողքերից ջարդուածքներ է ստացել։

—

Հոկտեմբերի 10-ին, առաւօտեան ժամը 9-ին, ելէքտրաքարշի վագօնը Սօլդատսկի բազարում դիպել է փայտով լիքը սայլին և կոտրել 2 եզնի ոտքերը, իսկ միւս եզի գլուխը ջարդել է։

—

Հոկտեմբերի 20-ին Պետերբուրգում ֆինանսների մինիստրութեան կից կայանալու է նաւթարդիւնաբերողների խորհրդակցութիւնը։ Բանւորները,—ասում է «Баку» լրագիրը,—շահագրգռված են ոչ միայն այդ ժողովով, այլ և նրա հետևանքներով, և նաւթահանքերում ներկայումս եռանդուն ագիտացիա է սկսված՝ բանւորների կողմից այդ խորհրդակցութեանը մասնակցելու համար մի քանի պատգամաւորներ ուղարկելու։ Բանւորները, ի հարկէ, յոյս ունեն որ այդ խորհուրդը կը համաձայնվի լսել իրանց պատգամաւորների ասելիքը, մանաւանդ որ իրանց վիճակը սերտ կերպով կախված է խորհրդակցութեան հետևանքներից։

—

«Сов. Мысль» լրագիրը հաղորդում է, որ գլխաւոր զինուորական դատախազ գեն. Պաւլօվի միջնորդութեամբ «Народъ» լրագիրը փակված է։ Գեն. Պաւլօվը իր այդ միջնորդութիւնը պատճառաբանել է նրանով, որ «Народъ» լրագիրը գրգռում է պրոլետարներին իր, այսինքն Պաւլօվի դէմ։

—

Ոստիկանական դեպարտամենտում տեղեկութիւններ են ստացվել, որ արտասահման գնացող քաղաքական յանցաւորներից շատերը վերադարձել են կայսրութեան սահմանները, մտնելով անլեգալ դրութեան մէջ։ Ոստիկանական դեպարտամենտը հրամանագրել է արտակարգ միջոցներ ձեռք առնել այդ անձանց կալանաւորելու համար։ Բացի դրանից, արտասահման գնալու թոյլտւութիւնը այսուհետև կը տրվի մեծ զգուշութեամբ։

—

Տվերի նահանգական վարչութեանը ուղարկված է մի նամակ, որը գրված է եղել Պետական Դումայի նախկին անդամ Րօդիչևի հասցէով։ Այդ նամակում Րօդիչևին և իր ընկերներին մահվան սպառնալիքներ են տալիս։ Ստորագրված է. «127 գիտակից պրոլետարներ»։ Նամակը ի հարկէ սև-հարիւրեակային ծագում ունի։

—

«Königsberd Hartnind Zeitung» լրագիրը, «Око»-ի ասելով, հաղորդում է, որ պարիզեան բանկիր բարոն Րօտշիլդը, ռուսական փոխառութեանը մասնակցելու համար՝ իբրև վրէժ իր կեանքի դէմ պատրաստվող մահափորձի պատճառով, հրէական հասարակութիւնից առաջարկութիւն է ստացել այլևս չը յաճախել սինագօգա. բարոնը հետևում է այդ խորհրդին

—

Լուր է պտտում, որ բոլոր բարձրագոյն դպրոցների պրոֆեսսորներն ու պրիվատ-դօցենտները վճռել են կօլլեկտիւ կերպով թողնել իրանց պաշտօնները, եթէ որ Մոսկվայի համալսարանի կօնֆլիկտը չը լուծվի նպաստաւոր մտքով։ Այդ առիթով մօտ օրերս տեղի է ունենալու Պետերբուրգի համալսարանի պրոֆեսսորների արտակարգ նիստը։

—

Հոկտեմբերի 3-ին Մոսկվայի քաղաքագլուխը հեռագիր է ստացել ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկուց, որով վերջինս հաղորդում է, որ մօտ օրերս հրատարակվելու է ընտրութիւնների վերաբերեալ հրահանգը և այդ պատճառով էլ հարկաւոր է սկսել նախապատրաստական զբաղմունքները։ («Нов. Путь»)

—

Պետերբուրգում գտնվող ժուրնալիստ Ալէքսանդր Ուլեարը ունկնդրութիւն է ունեցել Ստոլիպինի մօտ յատկապէս Օդեսսայում սպասվող հրէական ջարդի առիթով։ Պրեմիէրը ընդունել է Ուլեարին և, ինչպէս հաղորդում է «Око» լրագիրը, խօսակցութեան միջոցին խոստովանել է, որ դրութիւնը արդարև շատ լուրջ է, բայց գլխաւոր, անմիջական վտանգը, ասաց նա, կայանում է հրէական անիշխանականների պրովօկատորական գործունէութեան և «Բունդի» ագիտացիաների մէջ ընդդէմ զինուորական տարրի։ Այդ մարդիկ, Ստոլիպինի խօսքերով, եռանդուն են, գործունեայ, անպատկառ և յանուն պրինցիպների չեն խղճահարվել զոհ բերել մի քանի հազար կեանքեր եւրոպական սկանդալ առաջ բերելու նպատակով, որից կարող էր տուժել կառավարութիւնը, և շատ հաւանական է, որ մի այդ տեսակ պրովօկացիա կարող է չափազանց կարևոր հետևանքներ ստեղծել։

—

Ոստիկանական վարչութիւնը ներկայացրել է ներքին գործերի մինիստրին ռազմիկ խմբերի մասին զեկուցում։ Դատելով զեկուցագրից, սօց.-յեղափոխականների և սօց.-դեմօկրատների ռազմիկ խմբերը բեկանված են։ Զեկուցման մէջ լուրջ ուշադրութիւն է դարձնվում ինքնապաշտպան խմբակների վրա, որոնք գործում են հրէական նստակեցութեան շրջանում, և որոնք, վարչութեան կարծիքով, կարող են յեղափոխական դեր խաղալ։

—

Հարկաւոր ենք համարում յայտնել, որ «Մշակի» երէկվայ համարում (№ 220) տպված «Յեղափոխականներ և Հակայեղափոխականներ յօդուածը արտատպութիւն է Եգիպտոսի «Լուսաբեր» թերթից, որի յիշատակումը սխալմամբ մոռացված է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Մէշեդիսէր, սեպտ. 12-ին

Այսօր տեղի ունեցաւ «Մէշեդիսէր-Բարֆրուշ ազգային սնդուկի» վարչութեան նախաձեռնութեամբ և միջոցներով Մէշեդիսէրի գրադարան-ընթերցարանի բացումը։ Գաղութի սակաւաթիւ բնակիչները վաղուց անհրաժեշտ կարիք ունէին մի այսպիսի կրթիչ հիմնարկութեան։

Ամսիս 3-ին աշրաֆ-սարի-Բարֆրուշի վրայով կէսօրվայ ժամը 11 ին այստեղ ժամանեց Աստարաբադի ու Մազանդարանի ռուսաց ընդհանուր հիւպատոս պ. Վօյլֆը, իր տիկնոջ հետ. հիւպատոսին դիմաւորելու համար 2 օր առաջ Բարֆրուշ էր գնացել Մէշեդիսէրի ագէնտ հիւպատոս պ. Դաւիթ Փանեանցը։ Աւանիս կենտրոնում Ներսիսեան կամուրջի մօտ կօնսուլին դիմաւորեց տեղիս վաճառական դասակարգը, բաղկացած հայ և պարսիկներից, որը մի քանի խօսքով «քէֆները» հարցնելուց յետոյ ուղեկցվեց դէպի պ. Փանեանցի տունը։

Տան մուտքը և բակը զարդարված էին դրօշակներով ու ծաղիկներով։ Բակում հիւպատոսին և տիկնոջը դիմաւորեց Փանեանցի ընտանիքը, և օրիորդ Աստղիկը մի քանի պերճախօս բառերով բարի գալուստ մաղթելուց յետոյ, ծաղկեայ փունջեր մատուցելով նրա հրաւիրեցին, որտեղ 3 օր մնալով՝ սիրալիր հիւրասիրութեան զօրեղ ազդեցութեան տակ, ամսիս 6-ին շնորհակալ մեկնեցին Աստարաբադ։

Տեղացի

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 հոկտեմբերի։ Ցերեկվայ ժամը 2-ին բացվեց Պետական Խորհրդի կենտրոնի խմբակի համագումարը։ Հաւաքվեցին մինչև 60 անդամներ, որոնց թւում են ժողովրդական լուսաւորութեան կաուֆմանը և առևտրի մինիստր Ֆիլօսոֆը։ Նախագահում է երկրագործութեան նախկին մինիստր Երմօլօվը։ Հերթական հարցը դրված է խմբակի վերաբերումը Դումայի ընտրութիւններին և այն միջոցները, որոնք կապահովեն երկրի իսկական շահերի ներկայացնող մարդկանց ընտրութիւնները։ Բանալով նիստը, Երմօլօվը ի միջի այլոց ասաց, որ համագումարի նպատակն է—առաջին՝ ցոյց տալ իր եզրակացութիւնները և միջոցները երկիրը խաղաղացնելու համար և կարգը պահպանելու մինչև Դումայի հաւաքումը, երկրորդ՝ պայմաններ, որոցով ընտրողները կարող են կազմել մի այնպիսի ժողովրդական ներկայացուցչութիւն, որը ընդունակ կը լինի կարգ հաստատել և երկիրը տանել վերանորոգման ճանապարհով։ Վիճաբանութիւններից յետոյ պարզվեց, որ գաւառներում տրամադրութիւնը զգալի կերպով փոխվեց, շատ տեղերում օպպօզիցիայի ոգին փոխվեց՝ առաջացող անարխիայի վտանգի գիտակցութեամբ. մինչև անգամ Լեհական թագաւորութեան ներկայացուցիչները յայտնեցին, որ կառավարութեան աջակցութիւն ցոյց կը տան, եթէ նա չը կանգնի րէֆօրմների իրագործման ճանապարհի վրա։ Քննելով Դումայի ցանկալի կազմի ապահովութեան միջոցները, ժողովը ճնշող մեծամասնութեամբ եկաւ այն եզրակացութեան. որ ընտրողական օրէնքը առանց Պետական Խորհրդի և Պետական Դումայի չէ կարելի փոփոխութեան ենթարկել։ Պնդելով ընտրողական օրէնքի անփոփոխութեան վրա, խմբակը միևնոյն ժամանակ անհրաժեշտ է գտնում ձեռնարկել մի շարք միջոցներ, որոնցով կարելի է վերացնել պետական նպատակների համար անօգուտ ճնշումները, որոնք ժողովրդի մէջ ծնեցնում են անբաւական և դժգոհ տարրեր։ Դրական օրէնսդրական ակտերի հրատարակումը, որոնք կը փոփոխեն պետական կազմի ձևը, խմբակի կարծիքով՝ հնարաւոր է միայն ժողովրդի ներկայացուցչութեան մասնակցութեամբ։

ԲԵՐԼԻՆ, 9 հոկտեմբերի։ Հասարակութեան կարծիքը մեծ ուշադրութեամբ հետևում է Ֆրանսիայում սպասվող կաբինետի փոփոխութեան, մանաւանդ ֆրանկօ-գերմանական յարաբերութիւնների տեսակէտից։ «Պօստ» լրագրի կարծիքով, Կլէմանսօն Գերմանիայի թշնամին չէ, նրան կարելի համարել րէվանշի քաղաքականութեան կուսակից։ Նա կաշխատէ պահպանել Գերմանիայի հետ կօնկրէտ յարաբերութիւններ. Կլէմանսօն բաւականին խելօք և հեռատես պետական գործիչ է, որ չի հասկանայ, թէ ինչ օգուտներ կարող է Ֆրանսիան քաղել՝ պահպանելով Գերմանիայի հետ բարեկամական յարաբերութիւններ։

ԲԱԳՈՒ, 9 հոկտ.։ Երէկ Բալախանում ատրճանակով սպանվեց Բագուի «Նաւթային ընկերութեան» հանքերի կառավարիչ՝ ինժեներ Սնորսկին։

ԴԵՐԲԵՆԴ, 9 հոկտ.։ Երէկ, երեկոյեան ժամը 10-ին, զգալի հիւսիս-արևմտեան ուղղութեամբ զգացվեց երկրաշարժ։

10 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 հոկտ.։ Ներքին գործերի մինիստրը հոկտեմբերի 9-ին ուղարկեց բոլոր նահանգապետներին մի հրամանագիր հետևեալ բովանդակութեամբ. 1905 թւի դեկտեմբերի 11-ի բարձրագոյն ուկազը ընդարձակելով Պետական Դումայի ժողովրդի ընտրութիւնների մէջ մասնակցութեան իրաւունքը, որոշեց հաստատ կարգ՝ ի գիտութիւն ընդհանրութեան յայտարարելու լրացուցիչ ցուցակները այն մարդկանց, որոնք այդ ուկազի հիման վրա ստացան ընտրողութեան իրաւունք. ցուցակների հրատարակութիւնը տեղական (նահանգական) վարչութիւնների մէջ՝ փոխարինված է դնելու. այդ յայտարարութիւնները ցուցակներ կազմող հիմնարկութիւնների մէջ ի տեսութիւն (1905 թւի դեկտեմբերի 11-ին տրված Բարձրագոյն ուկազի 9-րդ բաժանումը)։ Ընտրութիւնների առիթով հրատարակված օրէնքի մէջ յիշատակված կանոնների հիման վրա, ցուցակների հրատարակութիւնը և կազմումը՝ աւելի ապահովութիւն են տալիս իւրաքանչիւր ընտրողի շահերին—առաջինը այն տեսակ, որից, որ հնարաւորութիւն են տալիս հէնց իրա ընտրողին ծանօթանալ ընտրողական ցուցակների հետ, այնպէս և բողոքելու անկանոնութեան դէպքում։ Ընդ ամին սակայն, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հնարաւորութիւն չը կայ պատասխանատւութիւնը յանձնել ընտրողական ցուցակները կազմող հաստատութիւնների վրա՝ ժողովելու անհրաժեշտ տեղեկութիւններ այն ընտրողների մասին, որոնք չեն ծառայում ադմինիստրական և հասարակական հաստատութիւններում իբրև տուրքեր և հարկեր վճարողներ կամ այն անձանց մասին, որոնք ստանում են կենսաթոշակներ և ռոճիկներ և այն տանտէրերի մասին, որոնք չեն վճարում բնակարանային տուրք (հեռագրական խզում), համաձայն 1905 թւի դեկտեմբերի 11-ին հրատարակած Բարձրագոյն ուկազի այդ տեսակ ընտրողների վերաբերմամբ պէտք է պահպանվի Բարձրագոյնս հրատարակված կարգ ու կանոնը՝ ցանկութիւն յայտնելու օգտվելու ընտրողական իրաւունքով այն ժամանակամիջոցի ընթացքում, որտեղ յիշատակված կը լինի ընտրողական ցուցակները կազմելու առիթով տուած հրամանը։ Անկախ սրանից այդ տեսակ ընտրողների, իրանց ընտրողական իրաւունքի օգտվելու նկատմամբ դրութիւնը թեթևացնելու համար, ես համապատասխան եմ գտնում իրաւունք տալ ընտրողական ցուցակները կազմող հաստատութիւններին, մտցնելու առանց առանձին յայտարարութեամբ յիշատակաց անձերից և նրանց անունները, որոնք անցեալ ընտրութիւնների կատարման ժամանակ ցանկութիւն են յայտնել մասնակցել ընտրութիւններին և մտցրված են ցուցակների մէջ։ Հաստատելով ընդ ամին համաձայն Պետական Դումայի ընտրութիւնների առիթով տուած կանոնների 23-րդ յօդուածի ընտրողական ցուցակներ կազմելու կարգ ու կանոնի հրամանագիրը՝ Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների համար, ես պատիւ ունիմ այսպիսին ուղարկել Ձերդ Գերազանցութեան՝ անյապաղ հրատարակելու տեղական վարչութիւններում և յանձնելու բացի դրանից ընտրողական ցուցակներ կազմող հաստատութիւններին։

ՎԻԵՆՆԱ, 9 հոկտեմբերի։ Արտաքին գործերի մինիստր կոմս Գօլուխօվսկին իր հրաժարականի մասին խնդիր տուեց։ Հրաժարականը սկզբունքով ընդունված է կայսեր կողմից։ (Թղթակ. բիւրօ)

ՊԱՐԻԶ, 9 հոկտեմբերի։ Քաղաքական գործիչների մէջ, որոնց հետ Կլէմանսօն հոկտեմբերի 8-ին խօսակցութիւն ունեցաւ, գտնվում էր նոյնպէս գեներալ Պիկարը. այնուամենայնիւ Կլէմանսօն յայտնեց, որ ինքը խնդրեց Պիկարին տալ իրան մի քանի հարցերի առիթով տեղեկութիւններ և մինչև այժմ ոչ ոքին չէ առաջարկել մինիստրների պօրտֆէլներ։ Կլէմանսօյի խօսքերով, որ ինքը ստիպված կը լինի նուիրելու 4 օր էլ կաբինէտը կազմելու համար, յետոյ նորից 4 կամ 5 օր էլ՝ նոր մինիստրների հետ ծրագրի հարցերի առիթով համաձայնութեան գալու։

ԼՈՆԴՈՆ, 9 հոկտեմբերի։ Շանխայից լրագիրները հաղորդում են, որ վաղը Խունանսկի նահանգում սկսվում են չինական զօրքերի զօրախաղերը։ Ենթադրում են, որ հարաւային զօրաբանակը կը գնայ Պեկինի վրա, իսկ հիւսիսայինը կաշխատի հաւաքվել Ճանդում մայրաքաղաքը պաշտպանելու համար։

ՊԵՆԶԱ, 9 հոկտեմբերի։ Երէկ երեկոյեան իր բնակարանում անյայտ չարագործների ձեռքով մահացու կերպով վիրաւորվեց ուսուցչական սեմինարիայի տեսուչ Օստրօումօվը։

ԽԱՐԿՕՎ, 9 հոկտեմբերի։ Ոստիկանութեան մի հրամանով յայտարարված է, որ գործադուլ ծագելու դէպքում գեներալ-նահանգապետը արգելում է առևտրական հիմնարկութիւնների տէրերին վճարելու բանւորներին գործադուլային օրավարձերը։ Խարկօվի գաւառում, Ալէքսէևսկի գիւղի մօտ՝ բացվեց պայթուցիկ նիւթերի մի պահեստ։

ԲԵՐԼԻՆ, 9 հոկտեմբերի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը ժամանակաւորապէս արգելեց ռուս ուսանողների ընդունելութիւնը Բեռլինի համալսարանում, մինչև որ կը մշակվի նոր կանոններ մասնաւորապէս ռուսների համար, որոնցից կը պահանջվեն նիւթական ապահովութեան վկայագրեր։

ՊԱՐԻԶ, 9 հոկտեմբերի։ Ֆալյէրը ընդունեց Իզվօլսկուն։—Կլէմանսօն զինուորական մինիստրի պօրտֆէլը առաջարկեց Պիկարին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 հոկտեմբերի։ Սարատովի փոխ-նահանգապետ Դուբասովին հրամայված է լինել Սիմբիրսկի նահանգապետի պաշտօնակատար։ Տարածված այն լուրերը, որ իբր թէ հոկտեմբերի 17-ին սպասվում է պետական կարևոր ակտերի հրատարակում—հիմքից զուրկ են։ Բանւորական խորհրդի պատգամաւորների գործի առիթով կանչված վկաների հարցաքննութիւնը այսօր վերջացաւ։ Նիստը կը վերսկսվի հոկտեմբերի 10-ից։ Հարցաքննված են 286 վկաներ։ Գործի քննութեան վերջացումը ենթադրվում է այս շաբաթվայ վերջին։

ԼՈՆԴՈՆ, 9 հոկտեմբերի։ Օկօնօվը դիմեց իռլանդական լիգային մի յայտարարութիւնով, որ իբր բրիտանական կառավարութիւնը պատրաստում է Իռլանդիայի ինքնավարութեան նախագիծը, որը քննութեան կենթարկվի պարլամենտական յետագայ նիստերում. նախագծի էութիւնը առ այժմ անյայտ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 հոկտեմբերի։ Ներքին գործերի մինիստրութեան բարձր աստիճանաւորներից կազմված խորհուրդը, քննելու համար տեղական ինքնավարութեան նախագիծը—հոկտեմբերի 7-ին բացեց իր նիստը, Ստոլիպինի նախագահութեամբ, որը նուիրված էր շինական և գաւառական վարչութիւնների րէֆօրմներին։ Ենթադրվում է պահպանելու գոյութիւն ունեցող համայնքը—իբրև հասարակական տիպի համադասային տնտեսութիւն և ադմինիստրական միութիւն։ Համայնքը կը բաժանվի համադասային տիպի շինական շրջանների, մեծ հողային տիրապետութիւնները կը բաժանվեն ինքնուրոյն միութիւնների, որոնց տէրերի վրա պարտաւորութիւն կը տրվի բարեկարգելու և հասարակական ապահովութեան պարտաւորութիւնները։ Ժողովի նիստերը վերջանալուց յետոյ՝ մշակված նախագծերը կը ներկայացվեն մինիստրների խորհրդի քննութեան, որից յետոյ խորհրդի կողմից գտած հաւանութեան հիման վրա՝ կը մշակվի մանրակրկիտ օրինագիծը, որը կը ներկայացվի Պետական Դումային։

ԹԷՀՐԱՆ, 9 հոկտեմբերի։ Պարլամենտում շաբաթը չորս անգամ տեղի է ունենում գործնական նիստեր։ Առ այժմ մշակվում է հրահանգ։ Պարլամենտարիզմի առաջին քայլերը երևան են հանում անպատրաստականութիւնը և անկարողութիւնը պետական գործերը կարգաւորելու մէջ։ Շահը, զիջելով հասարակական կարծիքին, չը հաստատեց իր որդուն արդարադատութեան մինիստր, որը Պարսկաստանում համակրութիւն չէ վայելում։ Նոյնպէս հեռացված է Թէհրանի նահանգապետը, որը թոյլ տուեց մթերքների գները բարձրանալուն։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութեան։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Յ. Գուլըհնօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաստ.։
Խ. Գ. ԱՐԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսուլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, հոկտեմբերի 12-ին
Հայ Դրամատիկ ընկերութեան խումբը
կը ներկայացնէ
ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ
Դրամա 3 արար., Ֆիլիպպիի, Թար. Գ. Վանցեր
Սկիզբը ժամը ճիշտ 7½ ին։
Տեղերի գները 1 րուբլուց մինչև 30 կոպ.
Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին մի րուբլի մուտքի համար։
Ռեժիսսոր՝ Յ. Աբէլեան
1—2

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, հոկտեմբերի 12-ին
Հայ թատերասէրները
կը ներկայացնեն
I
Մարուղ ճրագներ
Պիէս 3 գործ., հեղ. Ա. Աբէլեանի
II
ԿԸՌԹ-ԿԸՌԹ
Վօդեվիլ 1 գործ., հեղ. Մաղաթեանի
Մասնակցում են՝ տ. տ. Սավմեան, Մատինեան, Դավիդօվա, պ. պ. Լէօնիդև, Լաշքարեան, Խաչատրեան, Ղուշեան, Մարկոսեան, Շերինեան, Սալաղայա, Սանթուրճեան, Սողոմոնեան, Փարսադանեան, Փիրումեան և ուրիշները։
Սկիզբը ժամը ճիշտ 8-ին։
1—2

Ներսիսեան դպրոցի
ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
(VII դաս.) խնդրում է աշխատանք
կէսօրներից յետոյ.
(Աշակերտ պատրաստել, արտագրութիւն, սրբագրութիւն, դպրանոցի աշխատանք և այլն)։ Հարցնել «Մշակ»-ի խմբագրատան։
1—3

Լոյս տեսաւ
ՋԵՄՍ ՄՈՐԻԵՐԻ
ՀԱՋԻ ԲԱԲԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ
վէպ պարսկական կեանքից
հատոր երկրորդ
(320 երես)
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
«Հաջի Բաբայի» երկու հատորի գինն է 3 ր. 50 կոպ (720 երես)։ «Մուրճի» տարեկան բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում և 2 հատորի համար ուղարկում են միայն 2 րուբլի։
2—10

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄ
արծաթից շինված,
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար։
Գինն է 3 րուբլի ճանապարհածախսով։
Ապառիկ և վերադիր վճարով
ՉԷ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ։
Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну.
(և. հ. կ.) 10—10

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՋԻԹՈՂՑԵԱՆԻ
(Ֆենիկս Ռենեսսանս)
„ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ“
(Թարգմանական և ինքնուրոյն բանաստեղծութիւնների ժողովածու)
Գինը 30 կոպ. ճանապարհածախսով 40 կ., 100-ից աւելի գնողներին 20% զեղչ. պակաս գնողին 10%։
Դիմել թարգմանչին՝ Александрополь Никогайосу Цитохцяну. 13—15

ՆԵՐՍԻՍԵԱՆ
դպրոցի VII-րդ դասարանի երկու աշակերտներ ցանկանում են դասեր տալ հայերէնից և ուրիշ առարկաներից նպաստաւոր պայմաններով. կարելի է և սենեակի ու ճաշի փոխարէն։
Հասցէ՝ Елисаветинская ул. д. № 74, Седьмоклассникамъ.
ա. օ. 8—8

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեան
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶԳԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 / երեկոյեան 6—7
Տէլեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.
(ա. օ.) 25—150

Կենտրոնական գրավաճառանոցում
Թիֆլիսում, վաճառվում են Ղազարոս Աղայեանցի հետևեալ աշխատութիւնները
Ուսումն մայրենի լեզուի ա. տարի 23-րդ պատկերազարդ տպ. . . . — 20
» » » երկ. տ. 10-րդ կերպազարդ տպ. . . . —
» » երր. տ. 6-րդ տպ. —
» չորր. տ. առաջին տպ. —
Անահիտ, հին զրոյց, երր. տպագ. —
Արութիւն և Մանուէլ վէպ երր. տ. —
Բանաստեղծութիւնների ժողովածու, 1 ր. 50
Հայկական հնչիւնների մասին, — 25
Դումարով գնողներին սովորական զեղչ է լինում։ Օտար տեղերից դիմել Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ, արտասահմանից՝ Librairie Central à Tiflis.
Հ. 4—1

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և ղիքների հիւանդութիւնների։ Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 3
(կ. չ. ու.) 62—1

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեան
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան, կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Գավինի փողոցների, № 33/15։
(ա. օ.) 27—1

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կ. ԿԷՕՆՋԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամների հիւանդութիւն ունեցողներին. պատրաստում է ռուսական ատամներ, լցում, քիք և դամահարված ծնօտների պրօթեզներ։
Ընդունելութեան ժամերը 9—2 առաւօտ. և 4—6 երեկոյ.
Հասցէն՝ Վանքի և Բարօնսկի փողո անկիւն № 10։ (ա.օ.) 22—

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ
որ գիտէ հաշուապահութիւն և ծանօթ է մանուֆակտուրային-առևտրական գործերին, րոնում է մի որևէ համապատասխան պա
Հասցէն՝ Эривань. площадь, лимонадная ка А. Хачатурова.
ու. շ. և. չ. 4

Մի հայ ընտանիքում ԸՆԴՈՒՆՈՒՄ աշակերտներ և աշակերտուհիներ կատար պանսիոնով, պայմանները նպաս որ են. Гановская ул. № 12 4—

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇԱՐԻԿՆԵՐ
Պաշտպանութեան շարիկներ կանանց
Պահանջել միայն № 1 մէկ թիթեղեա 12 հատ 1 ր. 35 կոպ.։
Իւրաքանչիւր թիթեղիկի հետ գործածութեան միջոցը։ Ծախվում է Մոսկվայում, чистенская аптека. Ուղարկվում է վերադիր վճարով։
2

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրոսպէկտի և Կոջեւսկայեա փողոցի, տուն № 2, ժամշեանի։ Մուտքը Կոջեւսկի փողոցից։ 252—300
(ա. օ.)

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը նշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փոստային	Մարդատար.	Արագ.	Ապր
Բագուից դուրս գալը.	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր.
Թիֆլիս հասնելը.	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 38 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	8 ժ. 55 ր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	8 ժ. 16 ր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը. .	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր.
Թիֆլիս հասնելը	5 » 08 » առ.	—	—	4 ժ. 49 ր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը. .	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր.
Կարս հասնելը).	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր.

տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5